



Էղիկ Բադալյան (Ph.D.)

Հայկական Ընտանիք

Պատմա-ազգագրական համառոտ ակնարկ



ISBN: ISBN: 978-1-927860-44-1

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն
Լույս Հրատարակչություն
Տորոնտո 2016

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն
Լույս Հրատարակչություն
Տորոնտո 2016 Կանադա

Էդիկ Բաղդասարյան (Ph.D.)

Հայկական Ընտանիք

Պատմա-ազգագրական համառոտ ակնարկ



ISBN: ISBN: 978-1-927860-44-1

Հայկական Ուսումնասիրությունների Կենտրոն

Լույս Հրատարակչություն

Տրոնտո 2016



**Այս գրքույկը նվիրում եմ իմ սիրելիներին՝
Պարույրին ու Թինային
Հայոց մի նոր ընտանիքի՝ մի նոր ջերմ օջախի
ստեղծման և իրենց ամուսնական սրբազան
դաշինքի առիթով**

*Հեղինակ
Դեկտեմբերի 30, 2016թ.*

Քովանդակություն

ԱՌԱՋԱԲԱՆ	7
ԱՉԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	10
ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ և ԱՉԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՉԱՏՈՒՄԸ	11
ՀԱՅՈՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԲԱՂՄՈՒՆՔՆԵՐ, ԿԵՆՑԱՂԻ ՈՒ ՍՈՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՆԱՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	11
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՑԱՂԸ ՄԻՆՉև 19-րդ դարը	12
ԸՆՏԱՆԻՔԸ և ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՑԱՂԸ ԿԵՆՑԱՂԸ 19-20-րդ դդ.	15
ԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԳԱՐՈՒՄ	25
ԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ և ԱՍՈՒՄՆԱԿԱՆ ՍՈՎՈՐԱԹՅՈՒՆՆԵՐԸ 19-20-րդ դարերում	30
ՀԱՐՍԱՆԻՔ	38
ԱՉԳԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ	44
ՀԱՅՈՑ ԱՉԳԱՆՈՒՆՆԵՐԸ ՀՆԱԳՈՒՆ ՇՐՋԱՆ	47
ՀԱՅՈՑ ԱՆՈՒՆ և ԱՉԳԱՆՈՒՆ	49
ՀԱՅՈՑ ԱՆՈՒՆՆԵՐԸ	52
ԱՉԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ՏՈՆԵՐ	58
ԱՄԱՆՈՐ	58
ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ	61
ՋՐՕՐՀՆԵՔ	62
ԾԱՂԿԱՉԱՐԴ	63
ՉԱՏԻԿ	63
ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՏՈՆ	63
ՎԱՐԴԱՎԱՌ	66
ԽԱՂՈՂՕՐՀՆԵՔ	66
ԽԱՉՎԵՐԱՑ	68
ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՉ (ՏՐՆԴԵՉ)	69
ՍՈՒՐԲ ՍԱՐԳՍԻ ՏՈՆ	69
ԲԱՐԵԿԵՆԴԱՆ	70
ՄԵԾ ՊԱՍ	71
ՀԱՐՍԱՆՅԱՑ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ	73
ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ ԿԱՍ ԿՆՈՒՆՔ	74
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏՈՆԵՐՆ ՈՒ ՈՉ ԱԾԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐԸ	75
ԻՐԱՆԱՀԱՅ ԱՎԱՆԴԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ	78
ԱՍՈՒՄՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆԻ ՀԱՅ. ԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ	82
ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	86
ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ	87

Առաջարան

Ազգագրությունը գիտություն է ժողովուրդների կեն-
ցաղի, սովորույթների, տեղաշարժերի, էթնիկական յուրա-
հասկությունների, պատմամշակութային առնչություն-
ների մասին: Այն սերտորեն կապված է պատմության,
հնագիտության, սոցիոլոգիայի, լեզվաբանության, մար-
դաբանության, բնագիտության, աշխարհագրության,
երաժշտության հետ:

Ազգագրական նյութեր պարունակում են Հին
Եգիպտոսից, Ասորեստանից, Բաբելոնից, Հնդկաստանից,
Չինաստանից և այլ երկրներից մեզ հասած բազմաթիվ
հնագույն ձեռագիր աղբյուրները: Այդ առումով առավել
ակնառու է Հին Հունաստանի գրականությունը:
Հերոդոտոսի, Քսենոփոնի, Ստրաբոնի և ուրիշների
երկերում հանդիպում են նաև հայ ժողովրդին վերաբերող
ազգագրական տեղեկություններ: Այդ գրական
ավանդույթները պահպանել ու զարգացրել են միջնադարի
բյուզանդացի, պարսիկ և արաբ պատմիչներն ու
աշխարհագիրները:

Աշխարհագրական մեծ հայտնագործությունների
դարաշրջանում (15-16 դարեր) որոշակի հետաքրք-
րություն է առաջացել ժողովուրդների կենսակերպի
նկատմամբ, սակայն ազգագրությունը՝ որպես գիտություն,
ձևավորվել է 19-րդ դարի կեսերին, երբ տարբեր
երկրներում ստեղծվել են ազգագրական հաստատու-
թյուններ և ընկերություններ, հրատարակվել հատուկ
հանդեսներ:

Հայ ժողովրդին վերաբերող ազգագրական արժեքավոր
տեղեկություններ են պարունակում Աստվածաշունչը և,
հատկապես, միջնադրի հայ մատենագիրների երկերը:
Ազգագրական ուշագրավ նյութեր կան Հայաստան այցելած
միջնադարի արաբ մատենագիրների և եվրոպացի
ճանապարհորդների աշխատություններում: Արժեքավոր
տվյալներ կան վիմական արձանագրությունների, ժա-

մանակագրությունների, մանրանկարչության, գրականության մեջ, հնագիտական նյութերում և այլ աղբյուրներում:

19-րդ դարի 1-ին կեսից Մինաս Բժշկյանը, Ղուկաս Ինճիճյանը, Մեսրոպ Թաղիադյանը, Խաչատուր Աբովյանը, Ղևոնդ Ալիշանը, Մկրտիչ Էմինը և ուրիշներ գրառել և ի մի են բերել պատմական գրականության մեջ ազգագրության վերաբերյալ հիշատակությունները, նաև ժամանակի հայ բնակչության կյանքին ու կենցաղին վերաբերող նյութերը: XIX դարի 2-րդ կեսին ազգագրական նյութեր են տպագրվել հայ մշակույթի կենտրոններում (Թիֆլիս, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կոստանդնուպոլիս և այլն) հրատարակվող մի շարք պարբերականներում: 1860-ական թվականներից ազգագրական գիտական գործունեություն է ծավալել Գարեգին Սրվանձտյանը: Նրա աշխատանքների հիման վրա Գրիգոր Խալաթյանը 1887 թ-ին Մոսկվայում հրատարակել է «Ծրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» աշխատությունը՝ առաջին «Ազգային հարցարանը»: Ազգագրագետ Երվանդ Լալայանը հավաքել և հրատարակել է բազմաթիվ բանահյուսական նյութեր հայ առաջին ազգագրական պարբերականում՝ «Ազգագրական հանդեսում» (1895–1916 թթ.), որտեղ տպագրվել են նաև արժեքավոր ուսումնասիրություններ Հայաստանի մի շարք նահանգների ու գավառների (Ջավախք, Վասպուրական, Գողթն, Արցախ և այլն) վերաբերյալ:

Բազմաթիվ նյութեր են տպագրվել նաև Մկրտիչ Էմինի կտակած գումարով հրատարակված, Էմինյան ազգագրական ժողովածուում» (9 գիրք, 1901–13 թթ.): 19-րդ դարի վերջին հետզհետե տարանջատվել են բանահյուսությունն ու ազգագրությունը՝ վերածվելով գիտության առանձին բնագավառների: 1920-ական թվականներից արգասավոր գործունեություն են ծավալել ազգագրագետներ Խաչիկ Սամուելյանը, Ստեփան և Սրբուհի Լիսիցյանները, Վարդ Բդոյանը, Կարո Մելիք-Փաշայանը, Էմմա Կարապետյանը, Վարդան Թեմուրճյանը, Դերենիկ Վարդումյանը, Այա Օդաբաշյանը և ուրիշներ: Արժեքավոր են նաև սփռուքահայ գիտնա-

կաններ Վարդան Հացունու, Արշակ Ալպոյանյանի, Սերգեյ Հարությունովի և ուրիշների ներդրումները:

Ազգագրական ուսումնասիրություններ կատարվում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ու Երևան քաղաքի պատմության թանգարաններում, Սարդարապատի հուշահամալիրի Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանում: Վերջինս 2005 թ-ին հրատարակել է, «Նոր ազգագրական հանդես» պարբերականի մեկ համար:

Ազգագրությունը Հայաստանում

Ազգագրությունը՝ որպես ինքնուրույն գիտություն, Հայաստանում ձևավորվել է 19-րդ դարում, թեև ազգագրական գիտելիքներ կուտակվել են հնագույն ժամանակներից: Հայկական լեռնաշխարհի վաղագույն շրջանի բնակչության մասին ազգագրական բնույթի տեղեկություններ են ձեռք բերվել հնագիտական պեղումների շնորհիվ: Լեռնաշխարհի բնակչության և հայերի մասին ազգագրական վկայություններ կան ասորական և ուրարտական սեպագրերում: Տնտեսական գրադմունքների, սովորությունների, ծեսերի ու հավատալիքների մասին հարուստ նյութեր են հաղորդում անտիկ ժամանակաշրջանի աղբյուրները (Հերոդոտոս, Քսենոփոն, Ստրաբոն, Տակիտոս և ուրիշներ):

Ազգագրական տեղեկությունները՝

Աստվածաշնչում և հայ մատենագիրների երկերում

Ազգագրական տեղեկություններ կան Աստվածաշնչում և հայ մատենագիրների (Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Ղազար Փարպեցի, Մովսես Կաղանկատվացի, Թովմա Արծրունի, Արիստակես Լաստիվերցի, Կիրակոս Գանձակեցի, Ստեփանոս Օրբելյան, Առաքել Դավրիժեցի, Չաքարիա Սարկավազ (Քանաքեռցի) և ուրիշներ) երկերում: 19-րդ դարի 1 թվականին կեսից մի շարք հայ հեղինակներ (Ղուկաս Ինճիճյան, Մեսրոպ Թաղիադյան, Խաչատուր Աբովյան, Մինաս Բժշկյան, Ղևոնդ Ալիշան և ուրիշներ) գրառել են ինչպես գրավոր աղբյուրներում սփռված ազգագրական բնույթի հիշատակություններ, այնպես էլ ժամանակակից հայոց կենցաղին ու սովորություններին վերաբերող նյութեր: 19-րդ դարի 2-րդ կեսին Հայաստանի և հայկական մշակույթի կենտրոնների (Վաղարշապատ, Շուշի, Ալեքսանդրապոլ, Թիֆլիս, Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կ. Պոլիս և այլն) պարբերականներում (այդ թվում՝ ռուս.) հրատարակվել են հայ ազգագրական նյութեր:

Բանահյուսության և ազգագրության տարանջատումը

19-րդ դարի վերջերին աստիճանաբար տարանջատվել են բանահյուսությունն ու ազգագրությունը՝ վերածվելով գիտության առանձին բնագավառների: Խորհրդային շրջանում արգասավոր գործունեություն են ծավալել Երվանդ Լալայանը, Ստեփան Լիսիցյանը, Իսաչիկ Սամուելյանը և ուրիշներ:

Հայոց տնտեսական զբաղմունքներ, կենցաղի ու սովորությունների ուսումնասիրությունները

1950-ական թվականներին հիմնավորապես ուսումնասիրվել են հայոց տնտեսական զբաղմունքները, կենցաղի ու սովորությունները: Լույս են ընծայվել հայ ժողովրդի տնտեսական կենցաղին, նյութական և հոգևոր մշակույթին, հասարակական հարաբերություններին, ժողովրդական փոխադրամիջոցներին, հավատալիքներին, ծեսերին ու պաշտամունքին վերաբերող տասնյակ ուսումնասիրություններ: 1971 թվականից, «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարում (լույս է տեսել 26 հատոր) հրապարակվել են թեմատիկ ուսումնասիրություններ, «նագիտության և ազգագրության ինստիտուտի արխիվում պահվող նյութեր: Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ոչ նյութական, մշակութային ժառանգության պահպանման և ուսումնասիրության շրջանակներում լույս է տեսել «Ազգագրական և բանահյուսական ժառանգություն» մատենաշարը, որտեղ ամփոփվել են ինստիտուտի արխիվում պահպանվող նյութեր:

Ընտանեկան կենցաղը Մինչև 19-րդ դարը

Հասարակությունը երկարատև փոխհարաբերությունների ընթացքում մշակում է իր համար վարվելակերպի զանազան ձևեր, որոնց մի զգալի մասը վերածվում է կենցաղային առանձին բնագավառները կարգավորող սովորույթների, բանավոր օրենքների:

Հայկական հնագույն բանավոր օրենքների մի մասը, թափանցելով պատմագիրների երկեր, հասել է մեզ, որոնց մի մասը վերամշակվել է քոիստոնյա օրենսդիրների կողմից: Այսպիսով, վաղ միջնադարյան հայ գրականության մեջ առկա են թե՛ անմշակ, այսպես կոչված հեթանոսական կանոններ և թե՛ վերամշակված՝ քրիստոնեական կանոններ:

Հայ պատմագրությունն ընտանիքի և ընտանեկան կենցաղի վերաբերյալ խիստ սակավ տեղեկություններ է ավանդել: Այս նյութերի միջոցով դժվար է պարզել, օշինակ մեծ ու փոքր ընտանիքների ձևերը: Յուրաքանչյուր հեղինակ բազմիցս կրկնելով, ընտանիք» բառը, չի նկարագրում նրա կազմը, նրա անդամների իրավունքներն ու պարտականությունները, ներքին փոխհարաբերությունները, աշխատանքի բաժանման և բազմաթիվ այլ հարցեր: Բայց կան հեղինակներ, որոնք որոշ չափով լրացնում են այդ պակասը. Օրինակ՝ Հովհան Մանդակունին 5-րդ դարի վերջերին ակնարկել է եռասերունդ ընտանիք: Իբրև կաթողիկոս, նա չի հանդուրժում բազմակնության դեպքերը, որ հավանորեն, իր օրոք գոյատևում էին. Մի կին, մի ամուսին՝ այս է նրանց սկզբունքը, ընդ ոռում ամուսինը պետք է համարվի կնոջ գլուխը, նրա փառքը և օրենքը: Նա քարոզում է հավատարմություն ամուսինների միջև: Կնոջը ատելը՝ անձնասպանություն, իսկ եղբորն ատելը մարդասպանու-

թյուն է համարում: Աստծու առջև չար են նրանք, ովքեր չքավորության կամ այլ առիթներով աստում են իրենց զավակներին: Չի հանդուրժում, երբ գորովագին հորը տանջում է անառակ որդին և ընտանիքում խարդախություն է տիրում: Ընդունելով, որ կինը բացարձակ իրավագուրկ չի կարող լինել, նա զգուշացնում է, որ ամուսնու թշնամական վերաբերմունքը կնոջ մեջ նույնպիսի հակակրանք է առաջացնում. հետևապես առաջարկում է տղամարդու իրավունքներն ի չարը չգործադրել: Երեխաների դաստիարակությունը համարում է ընտանիքի մեծերի առաջնահերթ խնդիրը:

Եղիշեն չի հանդուրժում պարսիկներին, որոնք ստիպում են հավատափոխ լինել և ընդունել բազմակնությունը՝ հանուն արագ աճման գաղափարի: Կիրակոս Գանձակեցին զայրությամբ է խոսում բարոյական նորմերը խախտող անձանց մասին: Ազաթանգեղոսը թագավորական ընտանիքը ներկայացրել է ծառաներով և սպասարկուներով հանդերձ: Ղազար Փարպեցին գրում է նորահարսի ամոթխածության և իր առագաստի մեջ մնալու, որոշ ժամանակ այլոց չերևալու մասին: Որոշ հեղինակներ ակնարկել են որդեգրության, դայակ և ստնտու ունենալու, ամլության և նույնիսկ միայնակ մայր լինելու մասին: Հովհան Մանդակունին ակնառկ ունի մեծահարուստ տների, նրանց գանձերի, շարժական և անշարժ գույքերի, անասնապահությամբ ու դաշտամշակությամբ զբաղվելու և բարձր հարկեր վճարելու վերաբերյալ: Արիստակես Լաստիվերտցին վկայել է մասնու մահից հետո կնոջ երկրորդ ամուսնությունը տանու ծարայի հետ: Ընդհանուր առմամբ վաղ շրջաններում **ընտանիք** բառը գործածել են շատ գրողներ և հանձնակիր:

Բուն ընտանիքի և նրա կենցաղի մասին ուշագրավ նկարագիր է թողել 17-րդ դարի պատմիչ Չաքարիա սարկավազ Քանաքեռցին: Նա ներկայացրել է 1650-1690-

ական թվականների գերդաստանի կենցաղը Կարբիում: Նկարագիրն ընդգրկում է երեք սերունդ՝ Հակոբջանը, նրա երեք արու զավակները և վերջիններիս 10 արու զավակներն իրենց կանանցով ու զավակներով, որոնց թիվը 30-ից ավելի է եղել: Գերդաստանը պատմիչն անվանում է **տուն**, իսկ նրա բաղկացուցիչ մասերը՝ **ընտանիք**: Առաքել Դավրիժեցին մոտավորապես մի այդպիսի ընտանիք է մատնանշել Տգրանակերտում:

Հին հայկական ընտանիքի և ժառանգական իրավունքի մասին ուշագրավ տեղեկություններ են պահպանվել Քսենոփոնի և Արտկոպիոս Կեսարացու երկերում:

Հայկական սովորությանին հայրիրավական օրենքներից թվարկված են հետևյալները.

1. «Ծնողներին ժառանգելու [իրավունք] ունեն միայն տղամարդիկ, բայց ոչ երբեք կանայք»:

2. Տակավին 6-րդ դարի սկզբին հայոց մեջ պահպանված է եղել գնմամբ ամուսնության սովորությի վերապրուկը: Այդ սովորությը դատապարտելով նաև այլ ժողովուրդների մեջ, օրենքն ասում է, թե դա ,մարդկային բնության անպատվությունն է, կանանց սեռի ստորացում: Կնոջը դիտում են որպես ցածր և անպատիվ մի էակի, ամեն մի պատվից զրկված լինելու արժանի, կարծես նա աստծուց չի ստեղծվել և չի մասնակցում սերնդի հարատևմանը:

3. Ինչպես երևում է, այդ նույն ժամանակներում Հայաստանում օժիտը հարգի չի եղել, կամ եթե ընդունված է եղել, ապա աննշան, ուստի Հուստինիանոսի օրենքն ասում է, ,որ կանայք առանց օժիտի չամուսնանան»:

Ընտանիքը և ընտանեկան կենցաղը 19-20-րդ դդ.

Հայկական ընտանիքի և ընտանեկան կենցաղի վերաբերյալ ստույգ տվյալներ են քաղված XIX—XX դարերի գրավոր ու բանավոր աղբյուրներից: Դրանց մեջ ամենահուսալին բանահավաքների գրի առած ազգագրական նյութերն են, որ ձեռք են բերվել հատուկ ծրագրերի օգնությամբ: Դրանց շնորհիվ էլ ազգագրական գիտությունը, XIX գարի վերջերից սկսած, կարողացավ տալ ընտանիքի գիտական բնորոշումը:

Ընտանիքի ձևերից մեկը հայտնի է *նահապետական* գերդաստան անունով, որն իբրև վերապրուկ գոյատևեց միայն գյուղական բնակավայրերում: Երկրորդը՝ *փոքր կամ անհատական ընտանիքն է*, որը գյուղերում մեծամասնություն էր կազմում, իսկ քաղաքներում՝ համատարած էր:

Նահապետական գերդաստանը կամ ընտանեկան համայնքը կազմվել է մայրական տոհմի քայքայումից հետո, երբ հասարակական կյանքի այլ բնագավառներից Բացի տղամարդն իր ձեռքն է վերցրել նաև ընտանիքի ղեկավարությունը: Ընտանիքի այդ ձևը ցույց է տալիս գուգամուսնությունից դեպի միակնություն կամ ,անցման աստիճան է ներկայացնում խմբամուսնությունից ծագող և մայրական իրավունքի վրա հիմնված ընտանիքի և արդի աշխարհի անհատական ընտանիքի միջև: Նշանակում է ընտանեկան համայնքի ծագումից մինչև նրա վերջնական կազմալուծումը հազարամյակներ են անցել:

19-20-րդ դարերի Հայաստանում մեծ ընտանիքը հայտնի էր *գերդաստան* անունով: Այն համապատասխանում էր հին հռոմեական **Familia-ին**:

19-20-րդ դարերի հայ գերդաստանի ընդհանուր սեփականությունն էին ներկայացնում՝ մշակելի հողերը, այգիները, բնակելի և անասնապահական շենքերը, ջրաղացներն ու ձիթահանները (եթե այդպիսիք կային), անասունները, երկրագործական գործիքները, կահույքն ու ամանները և տնային արհեստների արդյունքները (եթե այդպիսիք կային): Ընդհանուր սեփականությանն էր

միացվում նաև այն դրամական եկամուտը, որ ընտանիքի առանձին անդամներ վաստակում էին դրսում: Բացառություն էին կազմում անձնական գործածության իրերը, զենքերը, արհեստավորի գործիքները, առանձին անձանց ձիերը, կանանց օժիտը և զարդերը: Այս բացառությունները պատահական չէին, դրանք ակնհայտորեն մատնանշում էին գերդաստանի տնտեսական միասնության տրոհումը ֆեոդալական և կապիտալիստական հարաբերությունների պայմաններում:

Գերդաստանն ուներ կայուն կազմ, կուռ ղեկավարություն, փոխհարաբերությունները կարգավորող կարգ ու կանոն, որոնք դրսևորվում էին սովորությանի ն իրավունքի միջոցով:

Նայած բնական աճին, գերդաստանի կազմը առանց ընդոծիների հասնում էր 15—50-ի, իսկ առանձին ղեկավարում մինչև 70-80 և ավելի հոգու: 19-րդ դարի առաջին կեսին Հայաստանի երկու հատվածներում էլ գերդաստանները պահպանվում էին: Այդ դարի երկրորդ կեսին, կապիտալիստական հարաբերությունների արագ զարգացման հետևանքով, Արևելահայաստանում գերդաստաններն արագ քայքայում ապրեցին: Արևմտահայաստանում այդ պրոցեսն ուժեղացավ նույն դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին: Արևելահայաստանում դրանց մնացուկները հասան մինչև 1920-ական թվականների վերջերը: Սակայն այդ գերդաստանները 20—30 հոգուց ավելի չէին: Նման տնտեսություններում լրացուցիչ աշխատավոր ձեռքերն ավելանում էին ի հաշիվ տարեկան և ժամանակավոր մշակների: Մինչդեռ 19-րդ դարում առանձին մշակների հետ շատ գերդաստաններ վարձում էին նաև աշխատող ընտանիքներ: Գերդաստանն, այդպիսով, դասակարգային հասարակության մեջ պահպանում էր շահագործողական տնտեսության իր պատմական դերը:

Գերդաստանի նահապետը նրա ընդհանուր, միանձնյա ղեկավարն էր: Նրա իրավունքները գրեթե անսահմանափակ էին. նա էր ամբողջ սեփականության տերը և իր ձեռքի տակ ապրող չորս սերունդների ճակատագիրը որոշողը: Նրա իրավունքն էր՝ խրախուսել

գերդաստանի օգտին գործող անձանց և պարսավել ու պատժել նրա շահերի դեմ գործողներին: Սովորություններով նրան իրավունք էր վերապահված՝ ժառանգագրկել անհնազանդ զավակներին կամ թոռներին և հեռացնել ընտանիքից: Այս իրավունքներն առանձնապես խստացան կապիտալիստական հարաբերությունների զարգացման շրջանում, երբ գերդաստանի առանձին անդամներ դրամական վաստակ ձեռք բերելով քաղաքներում, հրաժարվում էին այն միացնել ընտանիքի ունեցվածքին, խախտում էին բարոյական սահմանված նորմերը:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին բանահավաքներն ամենուրեք մատնանշում էին գերդաստանի նահապետների երբեմնի բարձր հեղինակության անկումը, որը կապիտալիստական հարաբերությունների հետևանք էր, հետևապես անհատական ինքնուրույն ընտանիքների դերի բարձրացումը:

Ընտանեկան համայնքի մեջ նահապետի օգնականը նրա կինն էր: Վերջինս զբաղվում էր առտնին կենցաղի կարգավորմամբ: Բարոյական նորմերի պահպանման խնդրում կանայք լիովին ենթարկվում էին նրան: Մեծ մոր վրա էր դրված կանանց աշխատանքային դաստիարակությունը՝ տվյալ գերդաստանի սովորություններին համապատասխան: Աղջիկներին և նորաստի հարսներին նա սովորեցնում էր կանացի աշխատանքի բոլոր ձևերը՝ հաց թխելը, կերակուր, կաթնամթերքներ պատրաստելը և այլն:

Ազգի մեծից ու ավագ որդուց հետո նահապետի կինը ամուսնու գլխավոր խորհրդատուներից մեկն էր: Նա մեծ դեր էր կատարում գերդաստանի հարաբերությունները հավասարակշռության մեջ պահելու տեսակետից: Նա, նմանապես, ամուսնու լրատուն ու լրատարն էր, որով ուժեղանում էին դեկավարի և ենթակաների կապերը, վերացվում գերդաստան թափանցող արտաքին աննպաստ միջամտությունները և այն տրոհող տրամադրությունները:

Ամուսնու մահից հետո թեև նահապետի պարտականություններն անցնում էին ավագ որդուն և դեկավարման իրավունքներ էին շնորհվում վերջինիս

կնոջը, այնուամենայնիվ պահպանվում էին մեծ մոր ընդհանուր հսկողական իրավունքները:

Ինչպես ամուսնու կենդանության օրոք, այնպես էլ նրա մահվանից հետո նահապետի կինը մեծ հեղինակություն էր վայելում: Նրանից չէին երկյուղում, այլ հարգում էին, սրտաբացությամբ խորհրդակցում նրա հետ և ստանում իրենց հետաքրքրով հարցերի պատասխանը:

Մեծ մոր մահից հետո նահապետի օգնականը ավագ որդու կինն էր դառնում, որը լիովին ժառանգում էր սկեսրոջ պարտականությունները:

Ընտանեկան համայնքի տնտեսական հաջողությունների պայմաններից մեկը աշխատանքն ըստ սեռի ու տարիքի բաժանելն էր: Տանուտերը, բացի ընդհանուր ղեկավարությունից, ստանձնում էր նաև արտագերդաստանական հարաբերությունների կառավարումը և երբեմն էլ առևտրի կազմակերպման գործը: Որդիներից մեկը, հակումների համաձայն, ղեկավարում էր երկրագործական կամ այգեգործական աշխատանքները: Ցանքի և բերքահավաքի սեզոններում նա կազմակերպում էր երկու սեռի չափահաս բոլոր անդամների աշխատանքները, կանայք նախապատրաստում էին սերմացուները, իսկ տղամարդիկ՝ կատարում ցանքը: Բերքահավաքին և կայրցին մասնակցում էին բոլորը: Անասնապահների աշխատանքները հսկում էր տանուտիրոջ գավակներից մեկը, որը երբեմն դառնում էր ավագ հովիվը: Շատ գերդաստաններ ունենում էին ներընտանեկան տնայնագործներ՝ շալագործ, դերձակ, ատաղձագործ: Բրդի մշակումն ամբողջապես կատարվում էր կանանց և աղջիկների ձեռքով, որը ղեկավարում էր մեծ մայրը: Սննդամթերքների մառանի բանալիների տրցակը և բաշխման իրավունքը նահապետի կնոջն էր պատկանում, բանալին նրա իրավունքների խորհրդանիշն էր հանդիսանում: Նախապես խորհրդակցելով ամուսնու հետ, նա, սովորույթի համաձայն, կատարում էր կանանց աշխատանքի բաժանումը: Ավագ որդու կինը, սովորաբար, սկեսուրի անմիջական օգնականն էր:

Հայկական ընտանեկան համայնքը հազարամյակների ընթացքում մշակել էր իր անդամների

իրավահարաբերությունները կարգավորող բանավոր կանոններ: Գիտնականների ճիշտ դիտողությամբ, դրանց մեջ ամենաէականը երկու սեռերի փոխհարաբերության հարցն էր և ապա՝ ավագության կարգը: Քանի որ ընտանեկան համայնքը գոյացել է մայրական տոհմի անկման և հայրական իրավունքի հաղթանակի հիման վրա, ապա մայրական իրավունքի տապալումը *կանացի* սեռի համաշխարհային պատմական պարտությունն էր: Այդ պարտությունից սկսած մինչև գերդաստանների քայքայումն ու վերացումը կինը համարվում էր տղամարդու հյու-հպատակը: Դասակարգային հասարակության մեջ այդ ենթակայությունն ավելի շեշտակի բնույթ ստացավ և կնոջ իրավունքները սահմանափակվեցին կյանքի բոլոր բնագավառներում: Աղջկա ծնունդը գերդաստանում դժբախտություն էր համարվում: Աղջիկները մինչև ամուսնությունը, կանանց համեմատ, որոշ ազատություն ունեին, բայց պատանիների համեմատ՝ ճնշված էին: Աղջիկն իրավունք չուներ մասնակցել պատանեկան խաղերին և հասարակության մեջ գուսպ ու ամոթխած էր: Ամուսնության հետ կապված ծեսերը նրան դնում էին չխոսկանի դրության մեջ: Հարսանիքի օրը նա հագնում էր ծանր զգեստներ: Գլխի ծանր հարդարանքները, որոնցով կապվում էին քիթն՝ ու բերանը, օրինականացնում էին չխոսկանության հնամենի սովորությունները: Տղամարդը տնտեսական և հասարակական հարցերում կնոջ հետ հաշվի չէր նստում: Նա հաշվետու էր միայն նահապետին: Կինը նրա համար սերունդ աճեցնող էր: Երեխաները հոր սեփականությունն էին համարվում: Այս իմաստով էլ շատ դժվար էր ամուլ կնոջ բարոյական դրությունը: Կինը ամուսնու անունը չէր տալիս, իսկ ամուսինը նրան կանչում էր հոր անունով (Մինասի աղջիկ կամ հայրենի գյուղի անունով աշտարակցի): Կանայք տղամարդկանց ներկայությամբ երեխաներին կերակրելու իրավունք չուներին: Սովորույթը դատապարտում էր ծնողներին՝ ընտանիքի անդամների ներկայությամբ երեխաներին գրկելու և գոլրգոլրելու համար: Տղամարդիկ և կանայք ճաշում էին առանձին-առանձին, նորահարսները սկեսուրի հետ ճաշելիս երեսները քողով չէին ծածկում: Տղաների և

աղջիկների ամուսնությունը հիմնականում որոշում էր նահապետը՝ կնոջ հետ մասնակիորեն խորհրդակցելուց հետո: Ավագության կարգի ամեն մի խախտում դատապարտվում էր: Կրտսերները ավագների ներկայությամբ չէին նստում, իսկ նահապետի թույլտվության պարագայում առաջնորդվում էին ավագության կարգով: Նահապետը գերդաստանի գործերի կառավարման ընթացքում հազվադեպ պարագաներում էր հրավիրում ընտանեկան խորհուրդ: Գերդաստանում խստորեն պահպանվում էին բոլոր ծիսական կարգերը, որոնք իրենց հերթին կանանց և կրտսեր տղամարդկանց՝ ավագների նկատմամբ հնազանդ պահելուն էին ծառայում: Այդ ծեսերից էին՝ նահապետի և սկեսրայրների ոտքերը լվանալը և սրբելը, բոլորի ձեռքերին ջուր ածելուց հետո դրանք համբուրելը, սկեսրայրին՝ ոտքերը շփելով քնեցնելը, մեծերին ողջունելիս կանանց խոնարհվելը և ձեռքերը համբուրելը, նահապետի մորուքից ավելի կարճ մազեր պահելը, տոներին նահապետին ու մեծ մորը մեծարելը և նրանցից ընծաներ ատանալը և այլն:

Գերդաստանն իր մարդկանց և գույքին համապատասխան ունենում էր շենքերի մեծ համալիր: Վերջինիս նախնական պլանավորման մեջ նախատեսվում էին ապագա բաժանվող անհատական ընտանիքների բնակարանները՝ ելնմուտի հ եռանկարներով: Այդ համալիրի մեջ թոնրատունը, ինչպես ասվել է, ամենակարևոր բաժանմունքն էր:

Ամբողջ գերդաստանի անկողիները մի տեղ ծալք էին դնում կամ տեղավորում պատի մեջ բացված պահարանում: Դա գերդաստանի միասնության խորհրդանիշն էր. ծալքն ըստ խմբերի կամ ըստ գույգերի բաժանելի ընտանիքի մեջ տրոհումն սկսվելու նշանն էր համարվում:

Դարավոր ավանդությունների շնորհիվ գերդաստանը յուրաքանչյուր անձին կենտրոնաձիգ ուժով պահում էր իր մեջ՝ իբրև անբաժանելի մասնիկ: Եվ թեպետ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբին այդ ընտանիքն արդեն հիմնականում կորցրել էր իր դերը, այնուամենայնիվ նրա տրոհումն ու բաժանքը ծանր ազդեցություն էր ունենում ոչ միայն նահապետի ու նրա կնոջ, այլև հենց բաժանվողների

վրա: Ժողովրդական ասացվածքներում գերդաստանի բաժանումը մահու չափ ծանր էր համարվում, որովհետև նրանից պոկվում էին կարծեցյալ անբաժանելի մասնիկները, որով քայքայվում էր մեծ տնտեսությունը: Հնագույն սովորույթի համաձայն բաժանքը պետք է տեղի ունենար նահապետի ու նրա կնոջ մահից հետո: XIX դարի վերջերին ազգագիրների աչքի առջև, բաժանքն արձանագրվում էր նաև նահապետի ու նրա կնոջ կենդանության օրոք: Կապիտալիստական հարաբերությունների հետևանքով գերդաստանում ուժեղանում էին բաժանման միտումները: Սկզբնական շրջանում նահապետը գերդաստանը քայքայողներին դեռևս կարողանում էր գրկել ժառանգական իրավունքներից: Բայց նահապետական գերդաստանի քայքայման պատմական ընթացքը ոչ մի արգելքով չէր կարող կանխվել: Չկարողանալով կասեցնել անխուսափելին, երբեմն նահապետը ինքը, ազգի մեծերի հետ խորհրդակցելով, բաժանքն իրականացնում էր իր հայեցողությամբ: Սովորույթի համաձայն, կրտսեր որդին նահապետից չէր բաժանվում, հայրն այս որդու հետ վերցնում էր հին տան թոնրատունը կամ գոմն ու օդան և մնացածը բաժանում էր առանձնացող զավակներին, թոռներին ու մյուսներին: Նահապետի ընտրած բնակարանային, հողային ու գույքային այլ ունեցվածքները առանձնացնելուց հետո, մնացածները գյուղի ավագի և սպիտակամորուսների ներկայությամբ բաժանվում էին վիճակահանությամբ: Ապա բաժանքի արարողությունը սրբագործվում էր հայրական օջախից կրակը նորաստեղծ տները տեղափոխելու հնամենի սովորույթով:

Ընդհանուր առմամբ նահապետի մահից հետո նրա եղբոր կամ ավագ որդու ղեկավարած ընտանիքի բաժանքն էլ այդ կարգով էր տեղի ունենում, միայն այն տարբերությամբ, որ տան գլխավոր մասերը մեծին հատկացնելը բաժանվողների հայեցողությանն էր թողնվում:

Ինչպե՞ս հավաստում են գրավոր նյութերը, մեզանում լայն տարածում են ունեցել փոքր ընտանիքները: Այս հանգամանքը բնորոշ էր 19-րդ դարին և առավելապես 20-րդ դարի առաջին քառորդին: Դրա պատճառն այն էր, որ գերդաստանը, որպես այդպիսին, վաղուց էր կորցրել իր

պատմական դերը և ինչ որ մենք գիտենք նրա մասին, ամբողջապես վերապրուկ է: Մի վերապրուկ, որը Հայաստանի տնտեսական ու քաղաքական երերուն պայմաններում անխուսափելիորեն հարատևում էր իբրև փոխօգնության յուրօրինակ խմբավորում: Հաշվի առնելով, որ մեզ հայտնի գերդաստանների մեջ անհատական ընտանիքներն օժտված էին ինքնուրույն սեփականություն ստեղծելու իրավունքներով, կարելի է ասել, թե հայկական ուշ շրջանի նահապետական ընտանիքը որոշ իմաստով պայմանական միություն էր, որով և բացատրվում էր նրա դեկավարության խստությունը: Հենց այս հանգամանքով էլ պետք է բացատրել, որ անհատական ընտանիքները որքանով ավանդական ուժով կապված էին գերդաստանի հետ, նույնքան էլ նրանք հակոտնյա էին: Այստեղից էլ ծագում էին նահապետական ընտանիքի անընդհատ տրոհվածությունն ու ներքին լարվածությունը:

Ներգերդաստանական անհատական ընտանիքը շարունակ ձգտել է ինքնուրույնության: Դա հարաբերական իմաստով փաստորեն փոքր ընտանիք էր: Մյուս կողմից չափազանց ուշագրավ է հակառակ երևույթը: Ամեն մի անհատական ընտանիք պոտենցիալ կարգով իր մեջ պահում էր գերդաստանի վերածվելու հնարավորությունը:

Փոքր ընտանիքներն իրենց կազմի տեսակետից մինչև հեղա- փոխությունը բաժանվել են երեք ենթատեսակների: Առաջինը ամուսնական զույգն էր իր զավակներով ու թոռներով, երկրորդը՝ ամուսնական զույգն իր զավակներով և երրորդը՝ ամուսնական զույգն առանց զավակների, որ բնորոշ չէր և աննշան թիվ էր կազմում:

Առաջնորդվելով տնտեսական և ավանդական սկզբունքներով, այդ ընտանիքները ներկայացնող եղբայրները երբեմն միասին էին ապրում և երրորդ սերնդի ժամանակ միայն բաժանվում: Եվ քանի որ գյուղական հասարակության մեջ ընտանիքների մթնոլորտը «գերդաստանական» էր, փոքր ընտանիքները գոնե արտաքինապես մեծ մասամբ պահպանում էին տղամարդու իշխանությունը հավերժացնող սովորությունները: Այս տեսակետից առանձնապես աչքի էին ընկնում եռաստիճան ընտանիքները: Տղամարդն այստեղ դեռևս պահպանում էր

նահապետի որոշ իրավունքներ: Այդ ընտանիքները կանգնած լինելով գերդաստանի և երկաստիճան ընտանիքի միջև, հարկադրաբար պահպանում էին կնոջ և տղամարդու հասարակական տեսակետից անհավասար հարաբերությունները, որոնց ստվերի նման հետևում էր չխոսկանությունն իր բոլոր դառնություններով:

Երկաստիճան ընտանիքներում կնոջ և տղամարդու հարաբերությունները զարգանում էին ռեալ սկզբունքներով: Տնտեսության մեջ կինը ամուսնու հիմնական խորհրդակիցն էր, երեխաների անմիջական խնամողը, տնտեսության փաստական ղեկավարը: Այս ընտանիքն ուներ ազատ հարաբերությունների հնարավորություններ: Սակայն երկրագործական և անասնապահական աշխատանքների կազմակերպման տեսակետից երկսերունդ ընտանիքները կանգնում էին դժվարին դրության առջև: Շատ երեխաներ ունեցող կինը գրեթե անկարող էր մասնակցել դաշտային աշխատանքներին: Հիմնականում այս էր պատճառը, որ եռասերունդ ընտանիքները նախահեղափոխական Հայաստանում թվով զերակշռում էին, որովհետև այս դեպքում փոխօգնության հնարավորությունները մեծ էին:

1915-1920 թվականներին կոտորածների հետևանքով Արևմտյան Հայաստանից տարբեր տեղեր տարածվող հայության մեջ գերդաստանները իսպառ վերացան: Նախկինում բաժանված ընտանիքների ողջ մնացած անդամների վերամիավորումը դարձավ անխուսափելի երևույթ: Որբացած երեխաները որդեգրվում կամ ընդգրկվում էին հարազատների և այլոց ընտանիքների մեջ: 1930-ական թվականների սկզբներին սփյուռքահայ ընտանիքներն արդեն վերագտել էին իրենց բնական ձևերը: Սփյուռքի գյուղական բնակավայրերում իշխող էր դարձել եռասերունդ ընտանիքը, իսկ քաղաքներում՝ երկսերունդ ընտանիքը: 1960-ական թվականներին ևս այդ ձևերը պահպանվում էին ամբողջ սփյուռքում:

Խորհրդային Հայաստանում ընտանիքի հին ձևերը պահպանվեցին մինչև 1920-ական թվականների վերջերը և երեսնական թվականների սկիզբը: Քանի դեռ պահպանվում էին հողային սեփականատիրական

հարաբերությունները, եռաստիճան ընտանիքները մեծամասնություն էին կազմում: Տեղ-տեղ պահպանվում էին նաև գերդաստանների վերջին մնացուկները: 1930-ական թվականների առաջին կեսին, կոլտնտեսությունների կազմակերպման շրջանում, երբ արմատապես փոփոխվում էին հողային հարաբերությունները, գյուղական ընտանիքներն սկսեցին մանրանալ, իսկ գերդաստաններն ամբողջապես անցան պատմության գիրկը: Այդ ժամանակաշրջանից սկսած, տնամերձ հողամասերի բաշխման կարգին համապատասխան, ինչպես նաև քաղաքային կենցաղավարության [այն տարածման շնորհիվ, կոլ- տնտեսային ընտանիքները գերազանցապես երկաստիճան են դառնում: Երիտասարդները գյուղերում եռաստիճան ընտանիքներից անջատվելով, նոր ընտանիք են ստեղծում: Շատ բնակավայրերում, Արարատյան հովտում առանձնապես, բաժան- վող երիտասարդությանը հատկացնում են առանձին հողամասեր:

Ամուսնությունը միջնադարում¹

Ամուսնությունը հասարակական հաստատություն է, որը օրինական է դարձնում տղամարդու և կնոջ միությունը՝ սերունդ անեցնելու և դաստիարակելու համար: Միջնադարում ամուսնությունը տնօրինողը եկեղեցին էր, որը առաջնորդվում էր կանոնագրքերով ու դատաստանագրքերով: Կանոնագրքերը, իրավաբանական մյուս գրականությունն ու մատենագրությունը ամուսնության վերաբերյալ բավական նյութեր են պահպանել: Այդ նյութերը կարելի է բաժանել հիմնականում երեք մասի.

1. Բուն հայկական հեթանոսական ամուսնական սովորությունների բանավոր փշրանքներ, որ գրի են առել քրիստոնյա հեղինակները: Դրանց մի մասի նկատմամբ հեղինակներն ունեն քննադատական վերաբերմունք (երբեմն բարբարոսական և անառակ էին համարում հարսանեկան ծեսերը և այլն):

2. Հայկական եկեղեցական կանոնները, որոնք հորինվել են կրոնական գործիչների կողմից՝ ժամանակի պահանջներին համապատասխան: Դրանց մեջ բուն հեթանոսական սովորություններն աննշան տեղ են գտել:

3. Օտար կանոնները, որոնք կիրառվում էին հայկական եկեղեցու միջոցով:

Սակավ տեղեկություններից անգամ երևում է, որ ամուսնությունը քրիստոնեության մուտքից առաջ ազատ ու անկաշկանդ փոխհարաբերությունների վրա է հիմնված եղել: Միրային ազատ կապերը քրիստոնյա հայրերի քողմից մերժելը և նույնիսկ այն անառակություն դիտելը ցույց է տալիս, որ հեթանոսական շրջանում զույգը ամուսնությունից առաջ տնօրինելիս է եղել իր անձնական ճակատագիրը: Բայց, իհարկե, երիտասարդների նման ընտրությանն ուղեկցել են բանավոր օրենքները: Սովորության իրավունքի հիման վրա ծնողները կարգավորել են երիտասարդների փոխհարաբերությունները: Պետական միջամտությունն ամուսնության գործում զուսպ է եղել: Աստվածների ամուսնական կարգերից

¹ - Վ. Հ. Բրդյան, Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 132-161:

երևում է որ երիտասարդությունը հեթանոսության շրջանում բավականին օժտված էր ազատ ընտրության իրավունքներով: Դրա հաստատուն վկայությունն է հանդիսանում ժողովրդական բանահյուսությունը, որի համաձայն սիրային հարաբերությունները հին հայերի մեջ անհամեմատ ազատ են եղել, քան հետագա բոլոր ժամանակներում, ընդհուպ մինչև 20-րդ դարի սկիզբը:

Հին հայերը ևս, ինչպես այլ ժողովուրդներ, սահմանել են նշանտուք, հարսանիք և դրանց շուրջը տեղի ունեցող բազմաթիվ ծեսեր, որոնք իրենց ժամանակին կարևոր ու անհրաժեշտ են համարվել: Ամուսնությունն օրինականացվել է հենց այդ ծեսերի միջոցով: Քրիստոնեությունը ազգային այդ սովորությունները օգտագործել է յուրովի:

Կանոնագրքերում ամուսնության վերաբերյալ տեղեկությունները բազմազան են. դրանք ներառում են ռազմիկների, ազատների և հոգևոր դասի սովորույթները, հասի ու չհասի խնդիրները և այլն: Ինչպես երևում է, հեթանոս հայերի մեջ մերձամուսնություն է եղել: Հեթանոս հայերի սովորությունները մասամբ անցել են քրիստոնյա հայերի կենցաղը: Կանոնագրքերի հոդվածներում խստորեն դատապարտվել են հեթանոսական սովորությունները: Արգելվում էր այն աղջկա պսակը, որն իր ընտրած երիտասարդի հետ մինչև ամուսնական ծիսակատարությունը սեռական կապերի մեջ է եղել: Նման պարագաներում պսակը կարող էր կատարվել երկրորդ անգամ ամուսնացածների համար սահմանված կարգով: Դա ցույց է տալիս նաև, որ, իրոք, նախքան հարսանիքը հայ հեթանոս աղջիկները օգտվել են ազատ սիրո իրավունքներից, որքան որ թույլատրելիս են եղել ազգային հին սովորությունները:

Ամուսնության ձևերը հայ մատենագրության մեջ արտացոլված են կցկտուր: Դրանց համադրումը տալիս է միջնադարի ընդհանուր պատկերը: Փ. Բուզանդը Արշակավանի կառուցման մասին խոսելիս նշել է, թե Արշակ թագավորը մի շարք հանցագործների թվում անմեղ է ճանաչել նաև նրանց, ովքեր առևանգել են կանանց: Շահապիվանի ժողովի կանոններից մեկում ուղղակի ասված է, որ առևանգման սովորության մնացուկը պահ-

պանված է եղել թե՛ շինականների և թե՛ ազատների շրջանում և, որ գլխավորն է՝ առևանգումը կատարվել է հրոսների՝ «սուտ փեսայի» ընկերների խմբի օգնությամբ: Մ. Խորենացու գործում հիշատակված է առևանգման այն ձևը, երբ օգտագործվել է մարդ «որսալու» օղապարանը: Միրած օրհորդին առևանգելու դեպք է նկարագրել Չ. Սարկավազը: Իսկ Մմբատ Սպարապետի Դատաստանագրքի մեջ ասված է. եթե որևէ մեկը կույսին առևանգում է, նրանցից եղած երեխաներն ապօրինի համարելուց բացի՝ առևանգողին գրկում են ժառանգ ունենալու ֆիզիոլոգիական կարողությունից: 14-րդ դարի մի ձեռագրում պահպանված են ծխական այնպիսի արարողություններ, որոնք խորհրդանշում են առևանգմամբ ամուսնության հնագույն ձևերը:

Ամուսնության օրինական ձևը հին Հայաստանում եղել է և այժմ էլ համարվում է ընտրած աղջկա ծնողներին պատգամախոսությամբ դիմելը: Ընտրության այս ձևի կիրառմամբ կանխվում էին մերձավորների ամուսնության դեպքերը, ամուսնացողների հասակային անհամապատասխանությունը, պատահական ամուսնությունը և այլն: Այս կարգը օրինականացնող եկեղեցին, իր կանոններին համապատասխան, պահպանում էր մենամուսնության կանոնը և պայքարում երկկնության ու կնաթողությամբ այլոց կանանց հետ ամուսնանալու սովորությունների դեմ:

Միջնադարում ամուսնության դասակարգային բնույթը պահպանվում էր ամենայն խստությամբ: Բարձր խավերի և աշխատավորական դասերի միջև ամուսնությունը փաստորեն արգելվում էր: Մատենագրության մեջ առավելապես խոսվում է արքունիքներում ու իշխանական տներում տեղի ունեցող ամուսնությունների մասին և հազվադեպ՝ աշխատավորական խավերի ամուսնությունների մասին: Մինչույն ժամանակ ակնարկներ կան քաղաքական նկատառումներով ամուսնության սովորությունների վերաբերյալ, որ կիրառում էին Արևելքի պետությունները՝ Հայաստանի հետ ունեցած ռազմա-քաղաքական տարբեր հարաբերությունների ժամանակ: Ինամիական կապերի շնորհիվ կողմերը որոշ

ժամանակ ապահովում էին խաղաղությունը: Այդպիսի բազմաթիվ փաստերից են՝ հայերի կամա կամ ակամա խնամիության հաստատումը պարսիկների, բյուզանդացիների, արաբների, կիպրացիների, վրացիների հետ և այլն:

Անկախ ամուսնության կազմակերպման եղանակներից, բոլոր ժողովուրդների նման, հայերի մեջ էլ դրանք ուղեկցվում էին մի շարք ծեսերով, որոնք վերջավորվում էին հարսանեկան հանդեսներով: Հարսանիքը փաստորեն ամեն մի ամուսնություն հասարակականորեն վավերացնելու ծես էր, որի վերաբերյալ կան ուղղակի և անուղղակի մի շարք վկայություններ, արտահայտություններ ու բառեր:

Միջին դարերում ամուսնալուծությունը առհասարակ արգելված էր: Սակայն այն կատարվում էր զանազան պատրվակներով, Փ. Բուզանդի հաղորդման համաձայն Արշակ արքայի օրոք բազմաթիվ տղամարդիկ ու կանայք թողնում էին իրենց կանանց ու ամուսիններին և ամուսնանում այլոց հետ:

Խորին Հայքում, ինչպես հիշեցնում է Մ. Կահանկատվացին, եկեղեցական կանոնն ասում է, թե՛ որ տղամարդը առանց պատճառաբանելու թողնի իր կնոջը և անպսակ կին առնի՝ հավասարագոր է մարդասպանության, և ինքը դառն մահու արժանի է: Ամուսնալուծության դեպքեր են արձանագրել Ա. Դավրիժեցին և Չ. Սարկավագը:

Կանոնական գրականության սահմանումների համաձայն դատաստանագրքերը ամուսնալուծությունն օրինական են համարել այն դեպքում միայն, երթ կողմերից մեկը հոգեկան հիվանդություն էր ունենում դիվահարություն, եթե բորոտ էր, եթե կողմերն ասելությամբ էին լցված, եթե ամուսինը պղծագործությամբ կամ կրոնափոխությամբ էր զբաղվում կամ յոթ տարուց ավելի բացակայում էր երկրից կամ եթե կինը անբարոյականությամբ ու կախարհությամբ էր զբաղվում, և եթե ամուսինն անգոր էր: Այստեղից պարզ երևում է, որ գոնե հինգերորդ դարից սկսած հասարակական կազմակերպությունները եկեղեցու հետ ձգտել են, որքան կարելի է, կայունացնել ընտանեկան հարաբերությունները, համազգային մասշ-

տարով ընդհանրացնել բարոյական նորմերը, որոնք առաջին հերթին վերաբերում էին զեխ կյանք վարող ավատական վերնախավերին ու հոգևորականությանը: Պատմա- գիրները ամենայն խստությամբ ձաղկել են հասարակության մեջ բույն դրած ստախտությունն ու բամբասասիրությունը, չար նախանձը, ատելության ախտը, ազահությունը, գողությունը, շվայտությունը՝ հարբեցողությունը, անբանությունը, կախարդությունը, նենգությունը, խորամանկությունը, խարդախությունը, կեղծավորությունը, գողոզամտությունը, բանասարկությունը, քինախընդրությունը, հայհոյանքը, սնափառությունը, վրեժխնդրությունը, կաշառակերությունը և այլն:

Ամուսնությունը և ամուսնական սովորությունները 19-20-րդ դարերում

Հայրիրավական ընտանիքի ավատական, ու կիսավատական հարաբերությունների պայմաններում ամուսնական ընտրության կարգերը համապատասխանորեն նահապետական բնույթ ունեին: Երիտասարդ կողմերի սեփական ընտրությամբ ամուսնությունը խստորեն սահմանափակված էր, որին մեծապես նպաստում էր աղջիկներին մանկության շրջանում նշանագրելու կամ նույնիսկ հարս տանելու սովորությունը: Սակայն դա չի նշանակում, թե ընդհանրապես հայ իրականության մեջ ամուսնությունը բացարձակորեն բռնությամբ է կատարվել: Սոցիալ-տնտեսական նկատառումներով, ավագ սերունդը 19-րդ դարում և մինչև 20-րդ դ. սկիզբը հաճախ հաշվի չէր առնում ուստեր կամ դստեր հակումները: Ավագ սերնդի ավանդապահության ու խստության հետևանքով սեփական ընտրությունն ընդունել էր, այսպես ասած, ընդհատակյա, գաղտնի բնույթ, զարգացել էր գաղտնի, փոխադարձ միջնորդության սովորույթը: Հազվադեպ էին չընտրող կամ չընտրված տղաներն ու աղջիկները, եթե նրանք արբունքի էին հասնում: Փոխադարձ ճանաչման և ընտրության համար կարևոր դեր էին խաղում հարևանական կապերը, համատեղ խաղերն ու մրցումները, հարսանեկան տոները իրենց եռօրյա պարահանդեսներով, Համբարձման ծաղկահավաքը՝ իր ծիսակատարություններով ու երկարատև պարահանդեսներով, բազմապիսի խաղարի թվում առանձնապես ճյուղթու մրցումները, Վարդավառի ջրցանության մեծ հանդեսները, ուխտագնացությունն ու համատեղ զվարճանքները, ձիարշավները և այլն: Նշանակալից էին փոխադարձ օգնության սկզբունքով համայնքի ներ- սում կազմակերպված՝ աղջիկների կամ տղաների խմբական աշխատանքները, որպիսիք էին՝ այգեփորը, այգեթաղը, հողանքը, մրգահավաքը, բուրդ գգելը, Էրիշտայի խմոր պատրաստելը և այլն: Բոլոր դեպքերում երիտասար-

դության այդ շփումների հետևանքը՝ ընտրությունն էր լինում: Այդ տեղերում երիտասարդությունը հնարավորություն էր ստանում ցուցադրելու իր ֆիզիկական ուժը, գեղեցկությունը և հոգեկան առաքինությունները:

Ընտրությունն արտահայտելու ձևերը բազմազան էին, որոնք թե՛ գործնական և թե՛ ծիսական բնույթ ունեին: Ընտրությունը սովորաբար կատարում էին տղաները, մասամբ նաև աղջիկները:

Գոյություն ունեին առաջարկության հետևյալ ձևերը.

1. Չննդական հայացք, երբ դիմացինը հանգում է փոխադարձ ըմբռնման.

2. Սիրո խորհրդանիշ խնձորի հանձնում, երբ աչն ընդունողը վավերացնում է առաջարկությունը.

3. Շփումն իբրև սիրո առաջարկության միջոց, որի արտահայտման ձևերն են՝ ձեռքսեղմումը կամ թևը բռնելը. հասարակական պարահանդեսների ժամանակ «աղջկա ձեռքը մտնելը». աղջկա գլուխը կամ պարանոցը գրկելը, օրիորդի օձիքը բռնելը, աղջկա քսվելը տղային, հնագույն շրջանում փոխադարձ հոտոտումն իբրև ամենահնագույն տոհմական սովորույթ՝ մտերմանալու, յուրային դարձնելու համար, որից ծագել է ծիսական համբույրը, ծիսական համբույրն իբրև աղջկան ընտրելու և յուրային դարձնելու հաստատուն նշան:

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի առաջին քառորդին կենցաղում պահպանված էր *խնամապագ* անունը կրող սովորությունը, որը կիրառվում էր հարսնատի կերուխումն աղջկա հոր տանն ավարտվելուց հետո՝ տնից դուրս գալու պահին: Գյուղի երիտասարդները համբուրում էին իրենց սիրած աղջիկներին: Իսկ ըստ բուն հարսանեկան սովորույթի աղջկա կողմի մի տղան համբուրում էր տղայի կողմից եկած մի աղջկա: Նախապես՝ սիրած աղ- ջրկանը յուրային դարձնելուն, «տաբույացնելուն» էր ծառայում այդ խնամապագը, ի գիտություն ոչ միայն աղջիկների ու տղաների ծնողների, այլև համայնքի:

Ծիսական համբույրո՛վ ընտրության և «վավերացման» հետ անմիջական կապ ուներ կնոջ դեմքը կտածումով զարդարելու սովորույթը: Այն նախապես մայրական տոհմի

պատկանելության նշան էր: Բայց պատրիոկալ¹ բնակվածության և էքսոգամ² ամուսնության երևան գալով ընդունում է երկդիմի բնույթ. աղջիկը նախ կրում էր մայր ընտանիքի ու տոհմի, ապա նաև ամուսնու ընտանիքի ու տոհմի դիմանշանները: Հայկական հեքիաթների համաձայն հերոսը հենց որ համբուրում է ընտրած աղջկան, համբույրի տեղում խալեր են երևում, որոնք ըստ էության տղայի կողմի դիմանջաններ էին և տարույացնող իմաստ ունեին:

Ընտրությանը հետևում էին միջնորդությունները: Միջնորդների դերում հանդես էին գալիս աղջիկներն ու կանայք, որով (միանգամայն նվիրական զգացումով) կողմերի միջև տեղի էին ունենում մատանիների, թաշկինակների և այլ պարագաների փոխանակումներ: Սակայն միշտ չէր, որ այդ ընտրությունները հարգվում և հաշվի էին առնվում, որովհետև ամուսնացնելու իրավունքը ծնողներին էր վերապահված: Առանձնապես մեծ էր հոր իրավունքը, որը կարող էր մերժել զավակների նախասիրությունները և իր ցանկությամբ ամուսնացնել նրանց:

Ամուսնությունը տեղի էր ունենում ազգակցական աստիճանների հաշվառմամբ. յոթ պորտը ամենաօրինական սահմանն էր համարվում, թեև 5-6 աստիճաններ ունն էլ ընտանիք կազմելը բացառված չէր: Տվյալ ընտանիքի ոգով կնոջը դաստիարակելու ձգտումը երբեմն հանգեցնում էր աղջկանը դեռևս արբունքի չհասած հարս տանելուն: Տղաներին ամուսնացնում էին 15-20 տարեկան հասակում: Աշխատավոր ձեռք ուննալը հաշվի առնելով, պատահում էին նաև դեպքեր, երբ արբունքի չհասած տղային պսակում էին իրենից մեծ աղջկա հետ, որպիսի երևույթը, ինչպես ժողովրդական բանահյուսությունից երևում է, ծաղրի էր ենթարկվում: Հայ իրականությանը հայտնի էր **օրորոցսխազի** սովորությունը, որը նորածիններին նշանագրելու և հասունանալիս պսակելու կարգ էր: Պետք է ասել, սակայն, որ այդ երևույթները մասնակի բնույթ

¹ ~ Պատրիոկալը այն ամուսնությունն է, ըստ որի ամուսնացած զույգը բնակություն է հաստատում ամուսինի բնակարանում կամ համայնքում: Հակարակ դեպքում այս երևույթը կոչվում է մատրիոկալ:

² ~ Ամուսնությունը ընտանիքից կամ համայնքից դուրս գտնվողի հետ:

ունեին: Բնորոշը եղել է արբունքի հասածների ամուսնությունը:

Նշանադրությունը տեղի էր ունենում պատգամախոսության միջոցով: Ըստ որում կին պատգամախոսը գաղտնի կարգով շոշափում էր աղջկա ծնողների տրամադրությունը, որից հետո միայն ազդեցիկ մարդկանց պատգամախոս էին ուղարկում: Վերջիններիս այցելությունը քանիցս կրկնվելուց հետո, կնքված համաձայնությանը հետևում էին նշանադրությունը և փոխադարձ ընծայաբերումներով նշանավորվող բազմաթիվ ծեսեր: Նշանված աղջիկն ստանում էր սկեսրանց կողմից տրված ոսկո կամ արծաթե զարդանշանը, դրանով՝ կապվում ասպագա ամուսնու ընտանիքի հետ և գրեթե գրկվում բոլոր ազատություններից: Այնուհետև հարսնացուին հասարակության մեջ հանելու, ժողովրդական տոներին, հարսանեկան և այլ հանդեսներին մասնակից դարձնելու բոլոր իրավունքները վերապահում էին սկեսրանց կանանց:

Նշանադրեքից մինչև հարսանիքն ընկած ժամանակամիջոցը տևում էր մի քանի ամսից մինչև երկու և ավելի տարիներ: Զգճըգումների պատճառներն էին՝ օժիտի պատրաստումը, ամուսնացողի փոքրահասակությունը, փեսացուի պանդխտության մեջ գտնվելը և այլն: Կարճ կամ երկար նշանված մնալը գիտության մեջ հայտնի է **դիխոլկալ տարաբնակեցում** անունով:

Միջնադարի և 20-րդ դարի այդ բոլոր սովորությունները ձևավորվել և զարգացել են հայրիրավական տոհմի կամ պատրիլոկալ բնակվածության սկզբունքների ու մասնավոր սեփականության հողի վրա: Դրանց մեջ մատրիլոկալ բնակվածության մնացուկներից ամենակարևորը պետք է դիտել մի շարք հանգամանքներում պահպանված այն սովորությունը, երբ նշանված փեսացուին իրավունք էր վերապահվում ընծաներով այցելել աներանցը և գիշերել իր հարսնացուի հետ:

Հայկական ամուսնական սովորությունների մեջ պահպանված էին, ինչպես ասացինք, առևանգման մնացուկներ: 19-20-րդ դդ. ազգագրական առատ տվյալներից երևում է, որ առևանգմամբ ամուսնությունը ներկայանում է երկու կերպ, մեկը սովորական առևան-

գումն է՝ հին ձևով, որը դասակարգային հասարակության պայմաններում բավական այլակերպով է, և մյուսը՝ հարսանեկան ծեսերի մեջ պահպանված սիմվոլիկ ձևերն են:

Մեր իրականության մեջ առևանգումները տեղի էին ունենում երիտասարդի մի քանի զինված հասակակից և ոչ հասակակից ընկերների օգնությամբ: Աչդ գործողությունը տեղի էր ունենում զանազան պարագաներում, զանազան պատճառներով, այսինքն՝ երբ կողմերը միմյանց հետ կապված էին փոխադարձ սիրով, երբ կողմերն իրար անձանոթ էին, երբ ծանոթ կողմերից երիտասարդը միակողմանի սեր էր տաժում, երբ աղջկա ծնողները համաձայն չէին՝ նկատի ունենալով տղայի սոցիալական դրությունը, տեսքը կամ բարոյական կերպարը և այլն, երբ աղջկա հայրը համաձայն չէր, բայց մայրը համաձայն լինելով՝ նպաստում էր առևանգմանը, երբ տղայի ծնողներն էին մերժում նրա ընտրած աղջկան, երբ տղայի և աղջկա ծնողները համաձայն էին, բայց դուստրը մերժում էր և երբ տղան չէր կարող վճարել աղջկա «գլխագինը»: Ըստ որում աղջկա բացարձակ անգիտությամբ կամ բռնությամբ տեղի ունեցող առևանգումները հազվադեպ երևույթներ էին: Մնացած դեպքերում առևանգումները կատարվում էին տղայի կամ նրա ընտանիքի գիտությամբ և երբեմն՝ օժանդակությամբ: Որոշ վայրերի սովորության համաձայն առևանգումը կազմակերպող աղջիկներից առևանգողները մատանի կամ այլ թանկարժեք գրավական էին ստանում: Ծատ եկեղեցիներ և վանքեր, որոնց ապավինում էին առևանգման եղանակով ամուսնություն հայցողները, նրանց պսակում էին: Ուստի «աղջիկ փախցնել» խոսքը հազվադեպ պարագաներում միայն կարելի է ըմբռնել «առևանգում» իմաստով և 19-20-րդ դդ. նկարագրված այսպես կոչված առևանգումների մեծ մասը հիմնականում երիտասարդության անադարտ ու նվիրական սիրո արտահայտություններն էին, որ կատարվում էին կողմերի համաձայնությամբ, հետևապես՝ դատապարտելի չէին, որովհետև դրանք հիմնվում էին փոխադարձ սիրո վրա:

Գալով կնոջ գնման կամ գլխագնի հնագույն առումները 19-րդ դարի և 20-րդ դարի առաջին քառորդի

վրա տարածելու հանգամանքներին, կարելի է այն չափազանցություն համարել: Նախ դիտենք, որ իրոք այդ ժամանակաշրջանում ամուսնացող տղայի ընտանիքը հարսնացուի ընտանիքին որոշ գումար էր տալիս: Այդ գումարը միջնադարյան Հայաստանում հայանի էր **վարձանք** կամ **գլխագին** անունով: 19-րդ դարում **վարձանք** բառն իսպառ մոռացված էր, իսկ **գլխագին** տերմինը գործածում էին միայն գիտնականները: Դրանց փոխարեն գործածվում էին մեր երկիրը տիրող, զարգացման տեսակետից ցածր մակարդակի վրա կանգնած այն ժողովուրդների հոմանիշ բառերը, որոնք նրանց սոցիալ-տնտեսական կնցադին լիովին համապատասխանում էին: Այդ բառերն էին **խարսնը, հալգատը, բաշղը, հադեմաին:**

19-20-րդ դդ. սովորությունների համաձայն փեսացուն և նրա ազգականները տարբեր առիթներով հարսնացուին և նրա ընտանիքին դրամական ու նյութական նվերներ էին տալիս, որոնք հայտնի էին **արնագին, կաթնագին, ծծագին, հղե կտրեղ, ճնապահ** (ճանապարհի գին), **սարմիս**, իսկ միջին դարերում՝ **երեսացուն** անունով:

Ենչպես միջնադարում, հետագայում էլ աղջիկները ծնողների տնից օժիտ էին տանում փեսացուների տները: Օժիտի մեծագույն մասը կազմվում էր գլխագնի և երեսացուտեի միջոցով: Երբեմն նույնիսկ աղջկա ծնողները օժիտը պատրաստում էին միայն փե- սայի կողմից տրված միջոցներով: Միայն քչերն էին, որ իրենց դստեր օժիտը լոկ սեփական միջոցներով էին պատրաստում:

Կնոջ կարծեցյալ գնման և երեսացուտեի վերաբերյալ 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի առաջին քառորդի մամուլում, ինչպես նաև ազգագրական մասնագիտական գրականության մեջ կան բավական վկայություններ: Մեր համոզմամբ՝ հայկական ամուսնական անադարտ, գեղեցիկ, մարդասիրական սովորությունների մեջ **գլխագին** հասկացությունը և դրա օտար հոմանիշները իրենց նախկին բովանդակությունը չունեին: Դրանք պարզապես նշանակում էին խնամիների տնտեսական գործարքներ՝ ամուսնացող դստեր և նրա ամուսնու վաղվա անհատական ընտանիքը մայր գերդաստանի մեջ անձնական սեփականությամբ ապահովելու համար: Չույզերին

տնտեսապես ապահովելու երևույթը գալիս էր հին հասարակությունից և սկզբնավորվող կապիտալիստական հարաբերություններում ավելի էր հիմնավորվում: Անձնական սեփականության ստեղծման գաղափարն արմատացած էր ոչ միայն գերդաստաններում, ուր անհատական ընտանիքը 19-րդ դարում նահապետականությունից ազատագրվելու անգուսպ ելքեր էր որոնում, այլև նահապետական տան ավանդները պահպանող եռաստիճան ընտանիքներում: Օժիտի համար դրամ պահանջող աները և այն վճարող սկեսրայրը ճիշտ են ըմբռնել իրենց զավակների շահերի համար կատարվող գործարքի սոցիալական իմաստը: Իսկ ժամանակին մամուլի ներկայացուցիչները սխալ ընկալելով այդ երևույթը, չեն կարողացել վերծանել *գլխագին* հասկացողության ժամանակակից իմաստը: Միայն է աղջիկներին «ծախու ապրանք» անվանելը: Հենց միայն այն հանգամանքը, որ հայ իրականության մեջ դստեր ծնունդն իբրև այդպիսին չի հրապուրել, ինչպես որ եղել են այլ ժողովուրդների մեջ, ևս ժխտում է գլխագին հնագույն իմաստը Հայաստանում: Փաստերը հաստատում են, որ 19-րդ դ. երկրորդ կեսին և 20-րդ դ. սկզբին աղջկա բերած օժիտի հիմնական իմաստը կայանում էր նրանում, որ տնտեսապես ապահովեր նոր կազմվող ընտանիքը: Գանձակի զավառում գլխագին տերմինի փոխարեն գործածվում էր *պեժինքի փող* արտահայտությունը: Անկասկած, նման տերմիններ օգտագործելիս են եղել նաև այլ զավառներում, որոնց վրա բանահավաքն»րը ուշադրություն չեն դարձրել: Միջնադարյան *բաժինք* բառը 19-րդ դարում նոր բովանդակություն է ստացել: Այն բառացիորեն չէր նշանակում աղջկա ծնողների կողմից տրված օժիտ: *Բաժինքը* կամ *հարսնաբաժինքը* փաստորեն փեսացուի կողմից հարսնացուին տրված դրամի դիմաց սկեսրանը բերված ապրանքն էր: Ուստի հարսնաբաժինքը *գլխագին* հասկացողության և *օժիտ* իմաստի հետ ոչ մի էական առնչություն չուներ: Քանի որ *բաժինքի փողը* *գլխագին* չէր, որը աղջկա հայրական ընտանիքը յուրացնելու իրավունք չուներ, հատկացվում էր հարսնաբաժինք պատրաստելու համար: *Բաժինքի փողի* և սկեսրանց կողմից

հարսնացուին տրված նյութական ու դրամական նվերների գումարը հավասար էր հարսի բերած բաժինքի գումարին: Այս երևույթը ներկայացնող ազգագրական նկարագրությունները կատարված են 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին, որոնք ժխտում են գնմամբ ամուսնության գոյությունը Հայաստանի վերջին երկու հարյուրամյակների ընթացքում¹:

¹ ~ Նույն տեղում:

Հարսանիք

Հարսանիքը պատրիոկալ բնակվածությանը նվիրված ծեսերի շարք է: Պատրիոկալ բնակվածությունը ասելով պետք է հասկանալ աղջկա հարսնացումը տղայի տանը և նրա տոհմում, որն առաջացել է հայրիրավական տոհմի հաղթանակի հիման վրա: Հակառակ դրան, մատրիոկալ բնակվածության դեպքում տղան էր բնակություն հաստատում աղջկա տանը և նրա տոհմում:

Հնագույն հարսանեկան հանդեսներն ունեցել են հայրիրավական բնույթ՝ մայրիշխանական սովորությունների մնացուկներով, որոնք միջին դարերում և հետագայում չէին գիտակցվում: Դրանք հագեցված էին այնպիսի կախարդություններով ու հմայություններով, որոնք ծեսերի միջոցով հավերժացնում էին հայրիրավական կարգերը մայրիրավականի հանդեպ: Այդ իմաստով էլ հարսանեկան ծեսերն ունեն հայրիշխանական րարոյադաստիարակական նշանակություն: Հայրիշխանական սովորությունները նոր սերունդների մեջ դյուրությամբ պատվաստելու, ինչպես և աներեվույթ ուժերի դեմ մաքառելու համար հարսանեկան ծիսակատարություններն ուղեկցվում էին երգով, նվագով և կախարդական պարերով:

Հին Հայաստանում հարսանիքները գրեթե բացառապես տեղի էին ունենում աշնան և ձմռան ամիսներին, երբ դաշտային աշխատանքներն ավարտված և տարեկան պաշարները հավաքված էին: Ձմռանը պսակադրելու հանգամանքը կապված էր նաև առողջապահական նկատառումների հետ, որոնց վերաբերյալ կան միջին դարերի հայ բժիշկների ցուցումները:

Տղայի և աղջկա ընտանիքներում հարսանեկան նախապատրաստությունները սկսում էին հինգշաբթի օրը: Ըստ Հնագույն ավանդների, այդ հանդեսները տևում էին յոթ օր: Յոթ թիվն ուներ կախարդական նշանակություն, որի էությունն ըստ երևույթին աղերսվում էր հայ հեթանոսական յոթ հիմնական աստվածությունների անվան հետ. միանգամայն հնարավոր է, որ հարսանիքի այդ օրերից յուրաքանչյուրը նվիրվել է աստվածներից

մեկին: XIX դարում այս ավանդները պահպանվում էին միայն ունևոր գերդաստաններում, իսկ մյուս խավերում՝ հարսանիքի տևողությունը 2-3 օր է:

Հարսանիք հրավիրելու սովորության հին ձևերից ամենա- նախնականը պետք է համարել նվագախմբով հրավիրելու եղանակը: Չուռնա-նաղարա նվագողները բարձրանում էին հարսնետան բարձր կտուրը և հատուկ եղանակ էին նվագում: Որոշ վայրերում հարսնետան ներկայացուցչի ուղեկցությամբ նվագախումբը շրջում էր գյուղի փողոցները, մերձենում հրավիրվողի տանը և նվագում: Այս վերջին երևույթը, ամենայն հավանա- կանությամբ, կապվում է այն պարագայի հետ, որ դասակարգային շերտավորման պայմաններում բոլորը չէ, որ հրավիրվում էին: Մինչդեռ կտուրի վրա նվագելով հրավերքը հրավիրման հին եղանակի վերապրուկն էր, որը համայնքի ընտանիքների միջև խտիր չէր ճանաչում: Առանց նվագախմբի հրավիրումը կատարվում էր բանավոր խոսքով, միաժամանակ տանտիրոջն առաջարկվում էր մի բաժակ օղի կամ չոր միրգ, որի մեջ դժվար չէ տեսնել պտղաբերական ծեսերի մնացուկը: Հրավիրատուներով հարսանիք հրավիրելու ձևը թեև հայտնի էր 19-րդ դարի քաղաքներին, բայց գյուղերում այն տարածում գտավ միայն 20-րդ դ. առաջին կեսին:

Հարսանիքին նախորդում էին հանդեսի նախնական պատրաստությունները: **Կարվածքի** ժամանակ որոշվում էր հարսնառի օրը: Հարևան գյուղից հարս բերելու դեպքում աղջկա կողմը իմանալով հարսնառի մասնակիցների թիվը, որոշում էր նրանց հյուրընկալողներին: Նախապես ընտրվում էին փեսացուին և հարսնացուին զբաղեցնող **մակարներն** ու **ծաղկոցավորները**: Ավանդական քավորին տեղյակ էին պահում կամ ընտրում նորը: Հարսանիքի աղաջին օրը նշանավորվում էր կանանց հավաքով, որոնք շատ վայրերում պահպանել էին այդ օրը սննդամթերքներով հարսնետուն ներկայանալու հնագույն սովորությունները: 19-րդ դարում և 20-րդ դարի սկզբներին այդ սովորությունները կատարվում էին **տաշտադրոնքի** ծիսակատարությամբ: Այդ օրը երեց կնոջ գլխավորությամբ ու երաժիշտների նվագակցությամբ կանայք հմայական մի

շարք գործողություններ էին կատարում՝ մաղում էին պտղաբերությունը խորհրդանշող հարսանեկան գաթայի այլուրը, խմորի տաշտի վրա մոմեր էին վառում, որ հարսը լույսի նման պայծառանար. մաղողները գլխներին և տաշտի երեսին կարմիր քող էին գցում, որ հարսը ամոթխած, համավոր ու հնազանդ լիներ, այլուրը մաղում էին լուռությամբ, որ հարսը չխոսկան լիներ և այլն:

Մայրիրավական տոհմի անկման և հայրիրավական տոհմի երևան գալու դարաշրջաններին հատուկ էին ըստ սեռի ու հասակի կազմվող գաղտնի միությունները: Պատանիների ու աղջիկների այդ գաղտնի միություններում հատուկ մարդկանց ձեռքով տարվում էին մարմնակրթական, բարոյա-դաստիարակչական, կրոնական և այլ աշխատանքներ, որոնց նպատակն էր երիտասարդներին նախապատրաստել կյանք մտնելու: Այդ յուրօրինակ ուսուցումից հետո տղաներն ու աղջիկները ստանում էին ամուսնանալու իրավունք և ընդգրկվում էին տղամարդկանց կամ կանանց գաղտնի միությունների մեջ: Տղաների գաղտնի միությունները, բազմաթիվ այլ հարցերի հետ, հաճախ որոշում էին ամուսնանալ ցանկացող ընկերների համար աղջիկներ առևանգել, որ իրականացնում էին զինված հարձակումներով: Այդ սովորությունների մնացուկները գտնում ենք նաև հայոց հարսանեկան ծիսակատարությունների մեջ՝ խաղերի և զվարճությունների ձևով: Դրանց օրինակը մեզանում պսակվող տղայի ու աղջկա ընկեր- ընկերուհիների հատուկ ընտրված խմբերն էին, որոնք մասնակցում էին հարսանեկան բոլոր արարողություններին և հանդիսավորություն էին հաղորդում հանդեսին: Փեսայի շքախմբի անդամները կրում էին *մակար, թագվորցի, փեսամանուկ, փեսադբեր, փեսավեր, փեսածու, մանկտիք, մոմկտիք*, ինչպես նաև օտար- տերմինով՝ *ազար-ազարչարի* անունները, իսկ հարսնացուի ընկերուհիները կրում էին *քուրիկ, ծաղկոց, ծաղկվոր* անունները:

Ծաղկվորները շրջապատելով հարսնացուին, զբաղեցնում էին նրան գրույցներով, երգերով ու պարերով, նրա հետ մասնակցում այն հյուրասիրություններին, որ կատարում էին մերձավոր ազգականները և բարեկամները:

Այդ հյուրասիրությունը կրում էր *աղջիկ դուրս հանել* անունը: Ծավկվորները պաշտպանում էին հարսնացուի զգեստները, զարդերը և ագանելիքները ոչ միայն թագվորացիների, այլև մյուս բոլոր պատանիների, «հափշտակումներից»: Այդ սովորությունն, անկասկած, խորհրդանշում էր առևանգմամբ ամուսնությունը: Նրանք էին կատարում հարսին լողացնելու, հագցնելու, մազերը հյուսելու և այլ ծիսական արարողությունները՝ մերթ տխուր և մերթ ուրախ երգերի ուղեկցությամբ: Տխուր երգերը, որ *քուրիկները* կատարում էին հարսի՝ պսակ գնալուց առաջ, հիշեցնում են անցյալի մի քանի երևույթներ, ամենանախնականը այն էր, երբ բռնի առևանգումը աղջկա հոգեկան աշխարհի վրա տխուր հետքեր էր թողնում, որովհետև դրանից հետո առևանգվածները հաճախ հարազատ տոհմի երեսը չէին տեսնում: Երկրորդը՝ նշանադրությամբ ամուսնության այն դեպքերն էին, երբ աղջիկը ամուսնու հետ հարկադրված էր հեռանալ հայրենի ավերից:

Բերենք այդ իրողությունն արտահայտող երգի մի տուն՝ Չա- վախքի բանահյուսությունից.

*Էրթամ, էրթամ, հեռու տեղեր հեռանամ,
Էփոր մարիկա միտքս լյնի, մեջքս բռնեմ, կրռանամ.
Մի լա, մարիկ, մի լա, էկեր կր տանին:
Օխտն ախպոր մե քուրը ջոկեր կր տանին:
Մի լա մարիկ, մի լա, լալողը ես եմ,
Ղարիպ էրկրները կոլողը ես եմ:*

Մինչև 20-րդ դարի սկիզբը պահպանված էր մակարների առաջնորդ ընտրելու սովորությունը, որը Վասպուրականում տեղի էր ունենում պսակի նախորդ օրը՝ *ազպանստում* անունով: Մակա-րանիստը աճուրդի էր դնում այն գավազանը, որի «գնողը» դառնում էր *մակարապետ*, որը վայելում էր մեծ հեղինակություն: Իսկ նրան հպատակվելու առհավատյան մակարների կողմից հիշյալ գավազանը համբուրելն էր: Երեքից մինչև յոթ թագվորացիները մի տեսակ զինված ջոկատի տպավորություն էին թողնում, որովհետև բացի նախնադարյան

հասակային խմբերի ծիսական սովորությունների կատարումից, նրանք նաև հայրենիքը (տոհմը կամ պետությունը) պաշտպանելու ռազմական պարտականություն են ունեցել:

Հարսանեկան ծիսակատարությունների ժամանակ մակաները մականրապետի գլխավորությամբ ունեին մի շարք պարտականություններ: Նրանք թիկնապահների նման շրջապատում էին թագվորին և պաշտպանում նրան անակնկալներից՝ նրա ազանելիքները, զգեստները և մանավանդ գլխարկը «հափշտակելուց», որին մեծ եռանդով ձեռնամուխ էին լինում **ծաղկոցավորներն** ու բոլոր պատանիները: Ընդ որում փեսան դիմադրելու կամ ձայն տալու իրավունք չուներ: Նա հնազանդորեն ենթարկվում էր մինչև իսկ այն աղջնակին, որը «կողոպտում» էր իրեն:

Մասնակի բացառություններով՝ մակաների բոլոր գործողությունները հայրիրավական տոհմին հատուկ ամուսնության ձևերը հիշեցնող ծեսեր էին: Հարսանեկան ծեսերում հնամենի տարրերը պահպանելու իմաստով կարևոր են հարսնառի սովորությունները: Դրանք առանձնապես ակնբախ էին հարևան գյուղից հարս բերելիս, երբ աղջկա կողմի երիտասարդների միջև ծագում ու ծավալվում էին լուրջ մենամարտեր:

Հայաստանի մի շարք շրջաններում փեսացուն հարսնառի եր- թին չէր մասնակցում: Նա մակաների մի մասի հետ մնում էր իր գյուղում և երբ հարսնառը վերադառնում էր, հարսնացուի վրա չոր մրգեր էր թափում, որոնք պտղաբարությունն էին խորհրդանշում:

Հայոց հարսանեկան սովորությունների մեջ կարևոր էին փո~ խաղաքձ օգնության կոլեկտիվ եղանակները, որոնք միջնադարի միջով 20-րդ դար են հասել վաղնջական ժամանակներից՝ կրելով բազմապիսի ազդեցություններ: Նյութական օգնություն տրվում էր թե՛ փեսացուի և թե՛ հարսնացուի ընտանիքներին: Աղջկա հոր տունը *հինադրեքի* այցելելիս քավորը հարսին նվերներ էր տանում, որոնք գումարվում էին օժիտին: Այդ օրը և հարսնառին հարսի սկեսրայրը խնամու տունն էր հասցնում 2-5 մսացու ոչխար՝ կամ մի եգ կամ կով, մեծ քանակությամբ գինի և օղի, կարկանդակներ և այլն: Հարսնառը հարևան գյուղը մեկնելիս աղջկա հոր տանը գրեթե հյուրեր չէին մնում, որովհետև

նրա բարեկամները 1-4 մարդու հրավիրում էին իրենց տները և հյուրասիրում: Պատահում էր, որ հարսնառը հարկադրված էր գիշերել, այս դեպքում ևս հյուրերը մնում էին հյուրընկալների («մաղար իջեցնողների») տներում:

Ամուսնացող տղայի տունը վերոհիշյալ տաշտադրոնքի միջոցով՝ հարևան-բարեկամներից ստանում էր կաթնամթերքներ, ձու, էրիշտա, ձավարեղեն և դրամական նվերներ: Ազգականը կամ հարևանը և կամ քավորը գյուղեղուրս կամ գյուղամիջյան հարսնառ գնացողներին ընդունում և կերակրում էր: Մեկ կամ մի քանի օր նրա տանն էր ապրում հարսնացուն իր ուղեկիցներով: Տարբեր առիթներով այստեղ կերուխումի էին հավաքվում, նաև թագվորն ու թագվորցիները:

Ինչպես երևում է փաստական նյութերից և գիտնականների հետևություններից, հարսանեկան հանդեսները՝ իրենց ծիսական արարողություններով, պահպանել և մեր օրերն են հասցրել տոհմացեղային կարգերին ներհատուկ հասարակական հարաբերությունների տարրերը¹:

¹ ~ Նույն տեղում:

Ազգակցական համակարգ

Ազգակցությունը տղամարդքւ գծով հաշվող արյունակիցների խումբն է: Հին Հայերենում այդ խումբն արտահայտվել է *արյանառու* և *ցեղ* տերմիններով: Բայց իրանական երկարատև տիրապետության շրջանում այս հայերեն տերմինները փոխվել են պահլավերեն *ազգ* ու *տոհմ* և պարսկերեն *թոխմ* անուններով, որոնք մի շարք նշանակություններից բացի՝ սերունդ իմաստն ունեն:

Տոհմից անցնելով դասակարգային հասարակությանը և պահպանելով հին հետքերը, ազգակցական համակարգի մեջ ավելացել են նոր երևույթներ, որոնք համապատասխանում էին նոր պայմաններին ու կենցաղին: Ամուսնության, ընտանիքի, արյունակցության կա, ցեղակցության, ժառանգական իրավունքի, նախարարական և արքունի քաղաքական կազմակերպությունների պաշտոնետության և այլ հարցերի կապակցությամբ պատմագիրները բազմիցս առիթ են ունեցել ցույց տալու փոխադարձ կապերի մեջ գտնվող մարդկանց ազգակցական աստիճանները: Դրա համար նրանք գործածել են *ազգ*, *ազգական*, *ազգակից*, *ազգակցություն*, *ազգ* ու *տակ*, *տոհմ*, *ազգատոհմ*, *ցեղ*, *ցեղակցություն*, *արյանառու*, *արյուն* և այլ բառեր:

Ազգակցական համակարգի մեջ կարևոր տարրը տնտեսական հիմքն է: Հայկական ազգատոհմի անդամները այս կամ այն շափով կապվում էին տնտեսական փոխօգնությամբ կամ ունեցվածքի ժառանգմամբ: Ծեր և անօգնական մարդիկ հաճաճ ապավինում էին ազգականներին, իսկ որոշ ունևոր մարդիկ կազմակերպում էին ազգականների նյութական ապահովումը:

XIX դարի ազգակցական համակարգի պատմությունից երևում է, որ ազգատոհմը գյուղական բնակավայրերում ստեղծում էր ազգակցական կցաթաղեր՝ չենքերի ներսում լուրեր հաղորդելու ակնատներով (պատանցքերով): Ազգովին կամ հարևանների հետ խառն գութան լծելը և դաշտային մյուս աշխատանքները միասին կատարելը փոխօգնության և տեղ-տեղ էլ ինքնապաշտպանության նպատակ էին հետապնդում ընդդեմ

Հայկական լեռնաշխարհի թափանցած հարստահարիչների ավարառությունների:

Ազգատոհմին հատուկ են եղել ինքնապաշտպանությունը և վրիժառության պարտականությունը: Բոլոր ժամանակներում **ազգի** պատիվը շոշափողներից վրեժ են լուծել: Պատմագրության մեջ կան սուղ, բայց ցայտուն օրինակներ, որոնք ցույց են տալիս, որ վրիժառության հիմքում ընկած են հղել ոչ միայն բարոյական, այլև քաղաքական հարաբերությունները: Այսպես, օրինակ, Փավստոս Բուզանդը գրում է, թե Մանավազյան և Որդունի նախարարությունների միջև քաղաքական նկատառումներով արյունահեղ կռիվներ են եղել: Միմյանց մեծապես վնասելուց բացի, նրանք ավերել են նաև հայոց արքունական տունը:

Այս հակիրճ տեղեկությունից երևում է, որ ազգակցական ոլորտներում ազգատոհմերի միջև և հենց նրանց ներսում վրիժառությունը բխում էր սոցիալ-տնտեսական, քաղաքական և կրոնական ու բարոյական հիմքերից:

Ազգակցական համակարգի գաղափարական-հոգևոր կապերից մեկը արյունակիցների միջև ամուսնության արգելքն էր մինչև չորրորդ աստիճանը ներառյալ: Ավելի ուշ այն աստիճանաբար ընդգրկել է վեցերորդ և յոթերորդ պորտերը: Արգելքը ներառում էր նաև հոգևոր եղբայրությունը՝ քավորությունը: Գրավոր տեղեկությունների մի մասը վերաբերում է այդ **հասի** ու **չհասի** խնդրին: Առաջիններից մեկը Փ. Բուզանդն է, որը հենվելով կանոնական դրույթների վրա, գրում է, որ Ներսես Մեծը «նաև խրատում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինին..., հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից»: Ասողիկը զայրույթով է նշել քրոջ դստեր հետ ամուսնանալու փաստը: Կիրակոս Գանձակեցին աններելի է համարել, երբ աղվանների մեջ երրորդ աստիճանում վրաց առաջնորդի թույլտվությամբ ամուսնություն է եղել:

Ազգի ներսում արգելված է եղել նաև ամուսնանալ եղբոր այրու հետ: Բայց ինչպես 19-րդ դարի վերջերի

նյութերն են վկայում, այդ սովորության աննշան մնացուկները հարատևում էինգ երկար ժամանակ: Այս երևույթը հայտնի է *լևիրատ* անունով: Լևիրատի առանձին դեպքերը արձանագրված են միջնադարում: Դրանցից մեկը Գնելի այրու՝ Փառանձեմի հետ Արշակ թագավորի ամուսնությունն է: Իսկ եկեղեցական կանոններն ասում են. «Անիծեալ որ առնէ զեղբար իւրոյ զկին, վասն զի ընդ եղբարն իւրում պղծի. զի մի են նոքա»: Դատապարտվում են նաև այն անօրեն մարդիկ, որոնք հորեղբոր կնոջ հետ ամուսնություն են հաստատում և, բացի այդ, խառնակվում են հայրերի, որդիների, եղբայրների կանանց հետ: Իսկ դա որոշ չափով կապված է բազմակնության և բազմամայրության հետ, որոնց վերաբերյալ ևս մասնակի ակնարկներ կան¹:

¹ ~ Նույն տեղում:

Հայոց ազգանունները Հնագույն շրջան

Ազգատոհմի գաղափարական կապերի մեջ ամենակարևորը ազգանունն էր, որն իր արդի ձևով հնագույն ժամանակներին հատուկ չէր: Եղել են ազգը կոչելու և ազգակցական աստիճանները ցույց տալու տարբեր ձևեր, որոնք մեզ անգիր շրջանից չեն հասել: Ազգանվան այդ նախնական ձևերը նույնքան հին են, որքան ամուսնության պատմությունը:

Հասարակական բոլոր երևույթների նման, ազգանունը ևս ապրել է անընդհատ զարգացում, մինչև որ հասել է այժմյան աստիճանին: Հինգերորդ դարից սկսած գրականության մեջ հաստատագրվել են ազգանվան մի շարք ձևեր: Ըստ գրավոր հասած ձևերի և բանավոր տվյալների, հայկական ազգանունը միջնադարում ձևավորվել է երեք հիմնական սկզբունքներով: Առաջինը և ամենահնագույնը նախնու անունով կոչվելն է, երկրորդը՝ գյուղ անունով կամ քաղաքի անունով կոչվելը և երրորդը, որ միջնադարում սակավ է հիշատակվում, զբաղմունքով կոչվելը:

Հնում ազգանունն այսօրվա նման մի ընդհանուր վերջավորություն չուներ, ուստի որևէ անձնավորություն հիշատակելու համար նախ տալիս էին նախնու անունը, ապա պապին ու հորն անվանելով, հասնում էին իրեն: Այսպես, օրինակ. «Ավետներաց Մարգարի Մկոյի Ենոք», որ նշանակում էր՝ «Ավետի ազգատոհմի Մարգարի որդի Մկրտչի տղա Ենոք»: Ավելի կարճ՝ «Ավետներաց Մկոյի Ենոք» կամ ուղղակի «Մկոյի Ենոք»: Հր. Աճառյանի ուսումնասիրած անձնանունների մեջ էլ կան նման օրինակներ. «Բագամ, որդի Հայկազանց Փառնաւազ թագաւորի, թոռան թոռ Արմոզի»: Նախնիների անունով կազմվող միջնադարյան ազգանուններն ունեն *սց, սնց, ենց, ից, ինց, ոնք, ոնց, ունց, էան* և *եսնց* վերջավորություններ: Այսպես, օրինակ՝ Եղիազարեանց (11-րդ դ.), Շահանեան (12-րդ դ.), Մադունեանց, Յովսեփեանց, Մագիստրոսենք (13-րդ դ.), Բագու որդի պարոն Լևոնի Բագունենց (14-րդ դ.), Աստուածատուր Եաղուբեան (16-րդ դ.), Խուտիկենց,

Թորոսենց, Գանրպեանց (17-րդ դ.), Մկարաց Մինաս, Համազասպենց, Գաբելեանց (18-րդ դ.):

Ազգանվան այս ձևերն իրենց վերջավորություններով արյունակցական կապ ու պատկանելություն են մատնանշում: Ընդ որում *եան* վերջավորություն ունեցողները միջնադարում միաժամանակ նշանակում էին հայրանունը և ազգանունը: Նույնիսկ 19-րդ դ. հաճախ *եան* վերջավորությունը հայրանունն էր ցույց տալիս, իսկ *եանց*-ը՝ ազգանունը (Գրիգոր Աբրահամեան Մանամեանց):

Բացի նախնիների անունով կոչվելուց, միջնադարում տարածված էր նաև հայրանունով կոչվելը: Այսպես՝ *Դավիթ, Ալավկա որդի, Գրիգոր, որդի Աբասայ (13-րդ դ.), Աբդալ, որդի Յովհաննես քահանայի (15-րդ դ.), Ամիր-Վարդ, որդի Մկրտիչի և եղբայր Մարգարե երեցի (16-րդ դ.), Աստուածատուր Անկիլրացի, որդի Սաթյմիչի (15-րդ դ.), Ատրնեքսեհ Բագրատունի, որդի Վասակա, հորեղբոր որդի Աշոտ Մասկերի և հայր վրաց Աշոտ Կիւրապաղատի (9-րդ դ.),* և այլն¹:

¹ ~ Նույն տեղում:

Հայոց անուն և ազգանուն

Անունն անձի անվանումն է, որով նա ճանաչվում է հասարակության մեջ, իսկ ազգանունը՝ հիմնականում տոհմական անվանումը, որը փոխանցվում է ժառանգաբար:

Անունները ծագել են մարդկության զարգացման ամենավաղ շրջանում, հիմնականում՝ հասարակ անուններից: Ամեն ժողովուրդ ստեղծել է իր սեփական անունները, որոնք ժողովուրդների տեղաշարժերի և շփումների հետևանքով անցել են մեկից մյուսին:

Հնում մարդիկ երեխաներին անվանակոչում էին նրանց պահվածքին, արտաքինին համապատասխան կամ այնպիսի բառերով, որոնք արտահայտում էին ապագայում երեխային այս կամ այն հատկությամբ օժտված տեսնելու ցանկությունը,

օրինակ՝ հայկական *Վարդգես*, *Հրայր*, *Ռազմիկ* անունները համապատասխանաբար նշանակում են *վարդի պես մազեր*, *կրակոտ աչքեր ունեցող*, *մարտիկ*: Հայկական որոշ անուններ առաջացել են կենդանիների, թռչունների, ծաղիկների անվանումներից՝ *Եզնիկ*, *Այծեանիկ*, *Գառնիկ*, *Աղավնի*, *Արծվիկ*, *Հասմիկ* և այլն:

Հին Արևելքում սովորություն կար անձնանուններ կազմել աստվածների անունների նմանությամբ: Հին Հռոմում անուն էին տալիս միայն առաջին չորս արու զավակներին, իսկ հաջորդներին անվանում էին ըստ թվական հերթականության, օրինակ՝ *Քվինտոս՝ հինգերորդ*, *Սեքստոս՝ վեցերորդ*, և այլն:

Քրիստոնեության տարածումից հետո երեխաներին անվանակոչում էին նաև Աստվածաշնչում հիշատակված անուններով, որոնք տարածվել են Արևմուտքի գրեթե բոլոր ժողովուրդների մեջ՝ վերափոխված տարբերակներով: *Հովհաննեսը* ֆրանսիացիները դարձրել են *Ճան*, անգլիացիները՝ *Ջոն*, լեհերը՝ *Յան*, իսպանացիները՝ *Խուան*, իտալացիները՝ *Չովաննի*, ռուսները՝ *Իվան*: Հայերի մեջ տարածված աստվածաշնչյան բազմաթիվ անուններ՝ *Դավիթ*, *Սամվել*, *Ռուբեն*, *Բաահակ*, *Սառա*,

Թամար, Պետրոս և այլն, երբեմն ընկալվում են իբրև հայկական:

Հայկական անունների ուսումնասիրությամբ հատկապես զբաղվել է Հրայրա Աճառյանը. նա կազմել է իր տեսակի մեջ եզակի՝ «Հայոց անձնանունների բառարանը»՝ 5 հատորով:

Հայկական մի շարք անուններ արտահայտում են մարդու արտաքին և ներքին որոշ բարեմասնություններ՝ **Քեղուհի, Հրայր, Ժիրայր, Համեստ, Ազնիվ, Պատվական**, որոշ անուններ ծագում են տեղանուններից՝ **Նաիրի, Արարատ, Տարոն, Արարսի, Վանուհի**, մի այլ խումբ ունի կրոնական բովանդակություն և քրիստոնեական անունների թարգմանություն է՝ Հարություն, Առաքել, Աստվածատուր, կամ նոր անուններ են՝ **Համբարձում, Մկրտիչ, Գարուստ, Ավետիս, Սրբուհի** և այլն: Օտար ծագում ունեցող որոշ անուններ՝ **Սեդա, Մեդր, Եղիշե, Ռուզան, Սուրեն** և այլն, ձևափոխվելով դարձել են հայկական:

Ազգանուններ սկզբնապես չեն եղել, որովհետև հնում մարդիկ ապրում էին մեկուսացած, փոքրիկ բնակավայրերում, և բոլորը միմյանց ճանաչում էին: Իսկ նույն անունն ունեցող մարդկանց զանազանել են հայրերի անուններով, օրինակ՝ **Տիգրանի որդի Առաքել** և այլն:

Սակայն մարդկանց թվաքանակի ավելացման հետևանքով միայն անունով կամ հայրանունով հնարավոր չէր բավարարվել, և առաջացել են ազգանունները: Հին և միջին դարերում ազգանուն կրել են միայն ազնվական ընտանիքները, օրինակ՝ **Մամիկոնյաններ, Արծրունիներ, Ռշտունիներ** և այլն: Միջնադարյան Հայաստանում նշանավոր տոհմերը հիշատակելիս նրանց ազգանվանն ավելացնում էին ազգ կամ տուն բառերը՝ **Ազգն Մամիկոնյաց, Ազգն Ռշտունյաց, Տունն Արծրունյաց** և այլն: Երբեմն մարդկանց անվանը որպես ազգանուն կցվում էր նրանց ծննդյան կամ հիմնական գործունեության վայրի անունը՝ Մովսես Խորենացի, Գրիգոր Նարեկացի, Ներսես Լամբրոնացի և այլն:

Ժամանակի ընթացքում ամեն տոհմ իր ազգանունն է ստացել, որը հիմնականում առաջացել է տոհմում հեղինակություն վայելող որևէ նախնու անունից, կցվել է նաև

պատկանելություն կամ ազգակցական կապ արտահայտող նախաձանց կամ վերջաձանց. օրինակ՝ հայերը կցում են *-յան, -յանց, -ենց, -ունց, -ոնց, -ունի, -ոնի*, հույները՝ *-իդես*, պարսիկները՝ *-գադե*, սլավոնները՝ *-իչ, -սկի, -ով*, վրացիները՝ *-ձե, -շվիլի*, և այլն:

Ազգանուններ տրվել են նաև այն արհեստի անունով, որով հայտնի են եղել տոհմակիցներից մեկը կամ մի քանիսը՝ *Դարբինյան, Ոսկերչյան, Ճամազործյան*, նաև աչքի ընկած կնոջ անունով՝ *Մանանդյան, Շուշանյան, Հասմիկյան* և այլն: Որոշ ժողովուրդների (օրինակ՝ ռուսների) մեջ տարածված են կենդանիների անուններից առաջացած բազմաթիվ ազգանուններ (*Չայչիկ, Վոլկով, Մեդվեդև* և այլն): Հայերի *-ունի* վերջաձանցով ազգանունները հնում հատուկ էին նախարարական տոհմերին (*Անատունի, Արծրունի, Բագրատունի, Ռչտունի* և այլն), *-ենց, -ունց, -ոնց* վերջաձանցով ազգանունները՝ *Բակունց, Ադոնց, Բրուտենց* և այլն, այսօր էլ տարածված են Չանգեզուրում:

Հայերի մեջ ամենատարածվածը *յան*-ով վերջացող ազգանուններն են.

-յան-ը առաջացել է *-յանց* ձևից, որ նույնն է, ինչ *-ենց*-ը (*Արամյանց-Արամենց*, այսինքն՝ *Արամի տոհմին պատկանող*):

Հայաստանում գործող կարգի համաձայն՝ քաղաքացին ցանկության դեպքում կարող է փոխել իր անունն ու ազգանունը¹:

¹ - Հայկական Հանրագիտարան:

Այստեղ, պատշաճ ենք համարում ներկայացնել Հայոց անուններին նվիրված հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Ծիրազի բանաստեղծությունը.

Հայոց Անունները

Հ. Ծիրազ

Անուն կա, որ վարդի բույր է,
 Կա, որ սարի պաղ աղբյուր է,
 Կա, որ քեզ տուն կանչող քույր է,
 Կա, որ անուշ մոր համբույր է,
 Կա, որ ձեռքիդ եղբոր թուր է,
 Հայ անունը՝ պատիվը մեր՝
 Միշտ լավ գործի ծնունդ անմեռ:

Անուն էլ կա, որ մեր գլխին
 Ծաղրածուի գդակ է հին,
 Որ կնքել է ինչ-որ տերտեր,
 Կամ թե՛ դժնի մի ճորտատեր.
 Ու մենք հաճախ չենք ամաչում,
 Հին անվամբ ենք իրար կանչում,
 Թե՛ հե՛յ, ու՛ր ես, Բեդնի Խաչո,
 Ի՞նչ բանի ես, Ղաչաղ Վաչո,
 Տաշտաքերենց,
 Կաշառկերենց,
 Անուններ՛ր են, թե՛ հին վերքեր,
 Որ բանալով՝ չենք հարցնում դեռ,
 Թե ի՞նչ չլուտ, ի՞նչ Չալաղենց,
 Երբ Չալաղենցն աշխարհ փոխեց:

Անուն էլ կա, որ լսելիս
 Մարդ ակամա հարց է տալիս,
 Թե՛ ի՞նչ Կնյազ, ի՞նչ Իշխանիկ,
 Երբ ինքն ահա մի մարդ է նոր,
 Մի հին չոբան, չոբանի թոռ,
 Առաջ քաշված,
 Փառքով նշված,
 Ինքն է թաղել իշխան ու խան,
 Բայց գրվում է դեռ Իշխանյան,

Աղախանով կամ Բախշիբեգ,
 Ամիրխանով կամ Յախշիբեգ:
 Այն էլ յախշի, վայ, անհոգի,
 Կարծես, թե կար լավն էլ բեգի.
 Գայլը յախշի՞, տե՛ս դու հալա՝
 Անունն անգամ խաթաբալա:
 Անունն անգամ
 Օձի նման
 Փաթաթված վիզն Հայաստանի,
 Այրող հուշն է այն սուլթանի,
 Որ մեր լեզուն ու հողն անվերջ
 Ձուլել կուզեր իր ցեղի մեջ,
 Եվ կձուլեր (հայ կա դրսում,
 Որ հայերեն էլ չի խոսում. . .),
 Մենք էլ այժմ չէինք կարող
 Խոսել լեզվով մեր դայլայլող,
 Հայոց լեզվով մեր ազգաթագ,
 Թե մեզ չառներ գիր թևի տակ
 Խաղաղության՝ Մաշտոց հսկան,
 Որ կանչում է, թե՛ ո՛վ տղաս,
 Յոթ լեզու էլ թե իմանաս,
 Չմոռանաս քո մայր լեզուն.
 Սոռանալդ է ոսոխն ուզում. . .

Անուն էլ կա, բայց ո՞րն ասես,
 Կատակով են դրել կարծես,
 Մեկը մեկից անտոհմ ու սին՝
 Էլ անճաշակ Լյուքս ու Տորգսին,
 Էլ Իլոնա, էլ Ալֆրեդ,
 Էլ Ժոռժետա, էլ Վան-Շիրերտ,
 Էլ Իվետա, էլ Անտեֆոն,
 Էլ Ռիտա, էլ Պատեֆոն,
 Էլ Կլարա, էլ Անելկա,
 Թե թարգմանես՝ ի՞նչ դուրս կգա, -
 Ծաղր ու ծանակ մեր ուստրերին,
 Եվ առավել մեր դուստրերին:
 Բայց ծիծաղից վատթարը կա՝

Հանդիպում ես յոթն աղջկա՝
Յոթից մեկն է Վարդ ու Նարգիզ,
Մյուսները՝ Լուիզ, Լարիս,
Եվ դեռ՝ Էլլա կամ Նովելլա,
Մարդ չգիտի՝ ինդա՞, թե՛ լա.
Մի՞թե չկար, որ չես դրել,
Հայ մի անուն մարդավայել,
Որ կնքել ես՝ Արգենտինա,
Կարծես երկրի քարտեզ է նա.
Մեկն էլ մի ջուխտ աղջիկ բերել,
Գիտե՞ք անունն ինչ է դրել՝
Մեծ աղջկան՝ Գալանտերիա,
Իսկ փոքրինը՝ Դիզինտերիա:
Ծիծաղու՞մ ես, բայց սպասիր,
Մարդ-ավտոյի մասին լսիր.
Այն, որ ավտո շատ սիրելով՝
Շեվրոլետ եր դրել սիրով՝
Բայց Շեվրոլետն օրորոցում
Այս վշտից էր լալիս, կոծում:
Եվ ասում են, երբ մեծացավ,
Անունն ինչ է՝ երբ հասկացավ,
Հենց այս եղավ խոսքն առաջին,
Որ կայծակեց հոր ականջին.
Ի՞նչ Շեվրոլետ, ավտո հո չե՞մ,
Լա՞վ է, քեզ էլ «Վիլիս» կանչեմ:
Ծիծաղում ես, բայց ծիծաղն ի՞նչ,
Ու՞ր է հայոց անունը ջինջ,
Հագարից մեկն հագիվ ունի
Անուշ անունն իր հայրենի.
Մի Հասմիկ է, հագար Էլլա,
Մի Անահիտ, այնքա՛ն Բելլա,
Մի Արտավազդ, այնքա՛ն Համլետ,
Որ վիճում են մեր անվանց հետ,
Թե՛ եթե բանն այսպես գնա,
Էլ ձեր հայոցն ու՞ր կմնա. . .
Այնինչ ամեն հայ դյուցազուն
Փրկեց քո կյանքն ու հայ լեզուն,

Անհայտ հեռվում
Ընկավ կռվում,
Որ դու հիշես, պահես, փրկես,
Մոռացումից անունն իր վես,
Վարդան պահես, պահես Հունան,
Վահրամ պահես, որ իմանան,
Թե ո՞ր երկրի ծաղիկն ես դու.
Տոհմանունն էլ հողն է մարդու:
Երբ հնչում է մի Սանասար՝
Կարծես Սասնա քո սարն հասար,
Մի Այծեմնիկ անունն անգամ
Մայր Անին է հերոսական.
Մի անունն էլ հայ գործ է մի,
Մի զինվորն է, էլ ու՞ր զոհվի:
Ա՛խ, հերիք չէ՞ յաթաղանով
Խարված՝ գրվես Աղախանով,
Ինչու՞ «փոքրիկ» մի յան ջնջես՝
Մի ողջ ազգի մեծ սիրտ տանջես,-
Գոռ անունն էլ մի բուռ ոսկի՝
Սուրբ մասունք է մի սուրբ ազգի:
Հայ անունն եմ ես ձեզ ասում
Դուք հասկացեք հայոց լեզուն,
Ու թող ծաղկի կյանք ու գինով
Ամեն մի ազգ իր անունով:
Թող չխանդի Դեզդեմոնան,
Երբ դուստրերս Նազիկ մնան,
Ինքն էլ մնա
Դեզդեմոնա,
Խաղաղ մնա, մնա մեզ քույր,
Որ անվամբ էլ ծաղկենք մաքուր:
Մեր անունն էլ իր միտքն ունի.
Ի՞նչ պակաս է մի Աղավնի,
Անունն ինքն էլ՝ աշխարհի մեջ,
Անուշ մի կանչ խաղաղատենչ,
Ո՞վ է բռնել մեր կոկորդից՝
Որ ձեռքաշենք Հայկ ու Վարդից,
Հայկ անունն եմ ես ձեզ ասում
Դուք հասկացեք հայոց լեզուն,

Ամեն անուն մի բառ է ճոխ՝
 Ավանդավեպ՝ ազգդ պահող.
 Մի Վարդան է երբ մեկն ասում՝
 Ավարայրն է հետդ խոսում,
 Բավ է պոկես՝ ի սեր այրոց՝
 Հայ կնիքից անունն հայոց:
 Ա՛խ, ի՞նչ ասեմ ես այն հային,
 Որ սեր չունի էլ ազգային,
 Որ մայր հողից չի ամաչում,
 Իր հայ որդուն Ջոն է կանչում:
 Ա՛յս է ցավը, որ մտակույր,
 Պահիր անունդ հայրենաթուր,
 Պահիր ազգդ պատվո գահին՝
 Անունով էլ մեր ազգային:
 Կամ երբ մի նոր մանչ ես ծնում,
 Անունն ինչու՞ Հայկ չես դնում,
 Անունն անգամ զրահ հագին,
 Կամ ի՞նչ վատ է՝ մի Գարեգին,
 Կամ այս Շավարշն հայրենաշեն,
 Այս իմ Տիգրանն ու Եդիշեն,
 Այս իմ Արան գեղեցկաթով,
 Այս իմ Մհերն՝ իր քաջ Դավթով,
 Այս իմ Աստղիկն ամենագեղ,
 Անունն ինքն էլ հույսի կանթեղ,
 Այս իմ Վահրամ ու Վրթանես,
 Քո անուններն ինչու՞ վանես,
 Այս Սանասարն ու Սյկունին,
 Այս իմ Գեորգ Մարգալետունին,
 Հայ անունն էլ կյանք է հային՝
 Հայոց լեզվով աստվածային:

Ես մեկն ասի, դուք հիշեցեք
 Մեր անուններն հազար ու մեկ,
 Հազար բարի գործից ծնված՝
 Մերունդներով ոսկեջրվախ,
 Մեզ ավանդված, որ զրահենք,
 Մեր հայ ազգը հավերժ պահենք:
 Մարդս զանգ է, աշխարհն ականջ,

Լավ անունը զանգի դողանջ,
Բայց զանգն առանց զանգահարի,
Թեկուզ ապրի հազար տարի՝
Ոչ մի դողանջ չի հանելու,
Չանգահարը գործն է մարդու,
Գործ, որ թեկուզ ուժով բազկի,
Հավերժ փրկե պատիվն ազգի,
Գործ, որ Հայկից մինչև Հունան՝
Տավիղն է մեր խաղաղության:
Էլ ու՛ր մեր յույս լեզուն մարել՝
Այս նոր վշտի դեմ խոնարհել.
Ու թող այնտեղ Ջեմման՝ Ջեմմա,
Աստղկին այստեղ Աստղիկ մնա:
Քանզի ամեն ազգի անուն
Իր տարազն է, իր մայր լեզուն,
Իր սրբությունն հավերժական.
Եվ օրենքն է ողջ մարդկության՝
Իր ազգինը ով չսիրի՝
Թշնամին է ողջ ազգերի.
Ինչու՞ հագնես ձևն ամենի,
Երբ քոնն ունես, ո՛վ քաղքենի,
Երբ իր գույնից,
Իր անունից,
Իր մայր լեզվից ձեռ քաշողը՝
Վերջն էլ կտա իր մայր հողը. . .

Ազգային-կրոնական տոներ

Ամանոր

Ամանոր նշանակում է Նոր տարի: Հայերն այդ տոնը նշում են անհիշելի ժամանակներից սկսած: Մեր հները Ամանորն անվանել են նաև այլ անուններով. Նավասարդ, Տարեմուտ, Տարեգուլիս, Կաղանդ, Լոյե, Նոր տարի: Հազարամյակների ընթացքում տոնը նշելու ժամանակը փոփոխվել, հետ ու առաջ է ընկել: Խոր անցյալում հայոց նախնիները Ամանորը տոնել են գարնան զարթոնքին՝ Արեգ ամսին մարտի 21-ի գիշերահավասարի օրը: Դա պատահական ընտրություն չէր. հայը նոր տարվա հաջողությունն ու բերքառատ լինելը կապել է գարնան զարթոնքի հետ: Հնագույն ժամանակներից արեգակնատենչիկ կոչվող հայերն Ամանորը նշել են հենց Արեգ ամսի Արեգ օրը: Ամենևին էլ զարմանալի չէ, որ հայկական տոմարով բոլոր ամիսների առաջին օրը կոչվում էր Արեգ: Տոմարական փոփոխությունների հետևանքով հայոց Նոր տարին տեղափոխվել է Նավասարդի 1-ը, այսինքն օգոստոսի 11-ը: Պահպանվել ու մեզ է հասել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կողմից գրի առնված չափածո այն պատկերը, որն Ամանորին նվիրված ամենահին ստեղծագործությունն է հայ գրականության մեջ.

Ուտայր ինձ գծուխ ծխանի

Եվ գառալօտն Նաւասարդի.

Զվազելն Եղանց և զվարզելն եղջերուսց.

ՄԵՔ փող հարուաք և թմբկի հարկանեաք,

Որպէս օրեն էր թագաւորսց:

Ուտուննասիրողները հավաստում են, որ այս խոսքերը պատկանում են հայոց Արտաշես Բ թագավորին (մ.թ.ա. 30-20 Նավասարդի տոնահանդեսները տևել են մի քանի օր, որոնց ընթացքում կատարվում էին զոհաբերություններ, կազմակերպվում խրախճանքներ երգ ու պարի ուղեկցությամբ, թատերախաղեր: Անցյալում մեծաթիվ ուխտավորներ էին հավաքվում հատկապես Բագրևանդ գավառի Բագավան ավանում, ուր տոնը նշելու էր զնում հայոց արքունիքն ու զորքը: Քրիստոնեու-

թյունը Հայաստանում ընդունվելուց հետո նավասարդ-
 օգոստոս ամսին նշվող այս տոնը պաշտոնապես
 փոխարինվեց Սբ Կարապետ Հովհաննուն նվիրված տոնով,
 հեթանոսական աստվածություններին նվիրված տաճար-
 ները քանդելու հետ վերացան Բագավանի տոնահան-
 դեսները: Որպես նոր տարի Նավասարդը շարունակեց
 նշվել, բայց արդեն նոյեմբեր ամսին, այգեկութից հետո,
 մասնավորապես մինչև 20-րդ դարի սկիզբը նոյեմբերի 10-
 ին հաջորդող կիրակի օրը այն նշվում
 էր Արցախում, Տավուշում, Սյունիքում և այլուր: Հաջորդ
 օրը տոնական խնջույքների, կայերում խմբապարերի և
 երիտասարդական խաղերի, ձիարշավների օրն էր: Այդ օրն
 առավոտից սկսած միջոցներ էին ձեռք առնում տարվա
 առատությունն ու հաջողությունը ապահովելու: Ուշադիր
 հետևում էին, որ սեղանը միշտ առատ լիներ, կժերի ջուրը
 լրիվ չվերջանար, վստահ, որ լիքը սեղանն ու լիքը
 ամանները առատ ու բարեբախտ տարի կապահովեն: Վաղ
 առավոտյան հոգ էին տանում նաև անասունների ու
 հանդերի մասին, առատ կեր տալիս անասուններին, ցորեն
 ու գարի շաղ տալիս դաշտերում: Նույն ակնկալությամբ
 տուն մտած հյուրին դատարկ ձեռքով բաց չէին թողնում,
 քաղցրավենիք էին լցնում գրպանները, որևէ իր (գուլպա,
 գլխաշոր, թաշկինակ) նվիրում մտերիմներին:
 1080 թվականին Հովհաննես Մարկավագ
 Իմաստասերը հայկական տոմարի համար տարեսկիզբ է
 ընդունել օգոստոսի 11-ը: 1616 թվականին Ազարիա
 Ջուդայեցին (1707 թվականին՝ նաև Վարդան Կարթեցին)
 առաջարկեց հայկական օրացույցի մի տարբերակ, ըստ որի
 տարեսկիզբ էր ընդունվում մարտի 21-
 րը: 1758 թվականին Սիմեոն Ա Երևանցին մի նոր օրացույց
 կազմեց, որտեղ տարվա սկիզբ էր ընդունում հունվարի 6-ը
 (Քրիստոսի ծննդյան օրը):
 Գրիգորյան նոր տոմարը, որ կիրառության մեջ է
 մտել 1582 թվականին Հռոմի Գրիգորիս Երրորդ պապի
 շրջաբերականով և հաջորդել է Հողյան (հին) տոմարին,
 Հայաստանում ընդունվել է 1920 թվականին, իսկ հայ
 առաքելական եկեղեցին այն պաշտոնապես ընդունել
 է 1923 թվականին: Հայերը հունվարի 1-ը Նոր տարվա

սկզբի տոն են ընդունել վերջին հարյուրամյակին: Աշխարհի բազմաթիվ ժողովուրդների նման հայոց մեջ նույնպես Նոր տարվա տոնակատարությունը խորհրդա- նըշում էր անցած տարվա հանրագումարը, նոր սկսվող տարվա հաջողությունների ու առատության ծիսական ապահովումը և չարիքի կանխարգելումը: Այսպես, մարդիկաշխատում էին վերադարձնել բարոյական ու նյութական պարտքերը, լուծել-ավարտել վիճելի հարցերը, հաշտեցնել հակամարտող կողմերին և այլն: Նոր սկսվող տարվա հաջողությունն ապահովելուն էին միտված, օրինակ, գանազան հմայական իմաստ ունեցող խմորեղենների և մթերքի որոշ տեսակների գործածությունը, ինչպիսիք էին կլոր, մեջը ծակ՝ ցորենով ու գարիով զարդարված «հացի հոր», «գարու հոր» կոչվող խմորեղենները: Գյուղերում թխում էին կովի պտուկներ, արոր, գութան, քաղաքներում ընտանիքի եկամուտը խորհրդանշող աշխատանքային գործիքի պատկերով խմորեղեն (մկրատ, մատնոց, ուրագ, քսակ և այլն): Ծատ տեղերում թխում էին նաև մարդակերպ ու կենդանակերպ թխվածքներ ընտանիքի անդամների թվի համեմատ և ընտանի կենդանիների տեսակներից մեկական (եգան, կովի, ոչխարի և այլն): Թխվելու ընթացքում ուռչելը, կուտ դառնալը կամ սմբելը համապատասխանաբար դրական կամ բացասական գուշակություն էր տվյալ տարվա համար: Որոշ վայրերում թխում էին նաև «էգ» և «չիք» կոչվող երկու հաց, որոնցից «էգը» ողջ տարին պահում էին այլուրի մեջ, որպեսզի այլուրը առատանար, «չիքը» գցում էին հոսող ջուրը, որպեսզի «չարիքը» անցնող ջրի նման չքանար: Նոր տարվա գալուստը ուղեկցվում էր «նորոգելու» գործողություններով նոր հագուստ, նոր թխած հաց, նոր բերված ջուր, նորոգված կրակարան ևն: Նոր տարվա սկիզբը համարվում էր դեկտեմբերի 31-ի լույս հունվարի 1-ի կեսգիշերը և այդ ակնթարթին վերագրվում էր երկնային մեծ գորություն: Կեսգիշերին սկսվում էին ընտանիքի անդամների փոխադարձ շնորհավորանքները: Այդ ակնթարթի երկնային գորությունը լիարժեք օգտագործելու նպատակով ջանում էին այդ պահին օրհնած ջուր բերել տուն: Նոր տարին շնորհավորում էին հոսող ջրի մեջ

հատուկ թիված հացիկներ, ցորեն-գարու հատիկներ գցելով և երգելով.

Քեզի կուտամ ցորեն, գարի,

Դուն ալ ինձի տուր բարի,

Ծնորհավոր Նոր տարի:

Միաժամանակ այդ ջրի մեջ թռչում էին ծիսական խմորեղեն, որից ուտում էին իրենք, և մի խուրձ խոտ, որով կերակրում էին տան թռչուններին ու կենդանիներին:

Սուրբ ծնունդ

Աստվածահայտնության օրը կամ Քրիստոսի ծննդյան տոնը նշում են աշխարհի բոլոր քրիստոնյա ժողովուրդները: Քրիստոնեության վաղ շրջանում այս տոնը նշում էին հունվարի 6-ին Քրիստոսի մկրտության տոնի հետ միասին: 4-րդ դարում Հռոմի եկեղեցին որոշում ընդունեց Ծննդյան տոնը նշել դեկտեմբերի 25-ին, Մկրտությունը հունվարի 6-ին: Այս որոշումը 451 թվականին վավերացրեց Քաղկեդոնի ժողովը, որից հետո աշխարհի քրիստոնյա ժողովուրդները, հայերից բացի Ծնունդն ու Մկրտությունը նշում են առանձին-առանձին: Հայոց եկեղեցին հավատարիմ մնաց Ծնունդը հունվարի 6-ին նշելու ավանդույթին և ցայսօր այդ օրենքը պահում է անխաթար: Նույն օրը նշվող Մկրտության տոնը խորհրդանշում էր Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը: Ծննդյան տոնի հանդիսությունները հայ ժողովրդի կենցաղում պտտվում էին նախ և առաջ եկեղեցու ծիսակարգի շուրջ: Բայց և այնպես դրանց միահյուսվել էին որոշ ժողովրդական սովորություններ, որոնք տոնին մասնակիորեն հաղորդում էին ազգային բնույթ: Այսպես, հունվարի 5-ի երեկոյան տոնահանդեսը կենտրոնանում էր թաթախման երեկոյի ընթրիքի շուրջ, որին մասնակից ընտանիքի յուրաքանչյուր անդամի սպասքի առաջ վառվում էր նրա համար ժամերգությունից բերված մոմը: Այդ երեկո սեղանի գլխավոր զարդը ձկնեղենի զանազան տեսակներից պատրաստված խորտիկներն էին՝ խաշած, տապակած, ձկով կարկանդակ,

խորոված ձուկ և այլն: Ձկնատեսակներին ուղեկցում էին առատ յուղով օծված բրնձի, ձավարի, արիշտայի խառը կամ անխառը փլավները, այլուրից պատրաստած ու դռչարով կամ մեղրով քաղցրացրած խաշիլը, սիսեռով ու չորացրած բանջարեղենով ապուրը: Ընթրիքի ընթացքում տուն էին մտնում Քրիստոսի ծնունդն ավետող տղաների 3-5 հոգիանոց խմբեր, տանտերերից ստանում յուղ, ձու, ընկույզ, այլ մթերքներ: «Ավետիս» երգերը շատ բազմազան են, երգվում են տեղական բարբառով: Գրանցում փառաբանվում են Փրկչի առաքինությունները, հրաշագործությունները, ապա բարեմադություններ ընտանիքին և նրա անդամներին:

Ջրօրհներ

Հունվարի 6-ին պատարագից հետո կատարվում էր Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը խորհրդանշող արարողությունը, որ հայտնի է «Խաչը ջուրը գցել» կամ «Ջրօրհներ» անուններով: Հասարակության աչքի առաջ քահանան խաչը ջուրն էր գցում և մեռն կաթեցնում ջրի մեջ: Հավաքվածներն անմիջապես օրհնված ջրի մեջ թաթախում էին իրենց ձեռքերը, քսում հիվանդ մասերին համոզված, որ օրհնված ջուրը կլավացնի իրենց: Այդ ջրից թասերով, սափորներով տուն էին տանում, կաթեցնում յուղ ու պանրի կարասները, ամբարի մեջ՝ մթերքների առատությունն ապահովելու հույսով: Այդ ջրից պահում էին նաև մինչև հաջորդ տարվա տոնը և գործածում անհրաժեշտության դեպքում մաքրում ապականված ամանեղենը, խմեցնում հիվանդներին, խառնում Տեառնընդառաջի մոխրին և գործածում կարկտի դեմ և այլն:

Ջրօրհների տոնական ժողովրդական ծիսաշարն, անշուշտ, առնչվում է վաղնջական ժամանակներից հայոց մեջ հայտնի ջրի պաշտամունքի գաղափարին, որի դրսևորումներն առտնին ու տոնական կենցաղում ձգվում էին ողջ տարվա ընթացքում և միտում ունեին մարդկանց հաղորդակցել ջրի մաքրագործող ու կենսարար գործողանը:

Ծաղկագարդ

Ծաղկագարդը նշվում է Չատկից մեկ շաբաթ առաջ և խորհրդանշում է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, որպես մեսյա: Այդ օրը տղաներն ու աղջիկները հագնում են իրենց լավագույն զգեստները: Գյուղի տղամարդիկ կտրում են ուռենու ծառերը, իսկ աղջիկները զարդարում են դրանց ճյուղերը գույնզգույն կտորներով, մրգերով և կոնֆետներով: Երիտասարդները ուռենու ճյուղերից պսակներ են պատրաստում և կրում դրանք:

Չատիկ

Չատիկը ամենահին և ամենապատված տոներից է Քրիստոնյա աշխարհում: Բոլորը միմյանց այդ օրը շնորհավորում են՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» – «Օրինյալ է հարությունը Քրիստոսի»:

Չատիկից առաջ պատի շրջանում հայկական ընտանիքներում սկուտեղի վրա՝ բամբակի բարակ շերտով ցանում են ցորեն կամ այլ սերմ և դնում են այն լուսավոր տեղում, այնքան մինչև աճում են: Այդ կանաչ բույսը խորհրդանշում է զարունը և բնության զարթոնքը: Խոտի վրա դրվում են ներկված ձվերը և զարդարում են տոնական սեղանը:

Մինչ այժմ հայերը պահպանել են ձվերը կարմիր գույնով ներկելու և կորեկ հացի Աստվածաշնչյան սովորույթը: Երբ Քրիստոսին խաչել են, նրա մայրը վերցրել է մի քանի ձու և փաթաթել դրանք կտորի մեջ: Երբ մայրը տեսել է իր որդուն խաչված և արյունոտ, նա ծնկի է իջել և լաց է եղել: Մոր արցունքները և որդու արյունը թափվելով ձվերի վրա ներկել են դրանք, իսկ կտորը մայրը գցել է իր գլխին: Այդ օրվանից ավանդական է դարձել կարմիր գույնով ներկել ձվերը, իսկ կանայք գլխաշոր կրել եկեղեցի մտնելիս:

Համբարձման տոն

Նշվում է Չատիկից ուղիղ քառասուն օր հետո, հինգշաբթի: Թե տոնի անունը, թե նշելու օրը եկեղեցա- կան օրացույցով բացատրվում է Ավետարանի այն պատ- մությանը, ըստ որի Հարություն առնելուց հետո Քրիստոսը քառասուն օր շրջում է երկրի

վրա և ապա համբարձվում: Այս տոնը երևույթների այն դասական շղթայում է, երբ քրիստոնեությունը ժողովրդական տոները կատարման ժամանակով հարմարեցնում էր քրիստոնեական պաշտոնական գաղափարախոսությամբ պայմանավորված արարողություններին, նախաքրիստոնեական Հայաստանի ժողովրդական կենցաղում կարևոր դեր խաղացող գարնանային վերջին տոնը, փաստորեն կատարման ժամանակով համապատասխանեցվեց քրիստոնեական տոնացույցի Քրիստոսի Համբարձման տոնին: Տոնական հանդիսությունների բովանդակային ու կատարողական կողմերը, սակայն, մնացին հավատարիմ իրենց նախնական ձևերին Համբարձման, կամ, ժողովրդական լեզվով Վիճակի տոնահանդեսը խորհրդանշում է հասարակության և բնության կապը բնության բեղունության շրջանում, երբ մարդիկ ջանում էին իրենց հասկանալի միջոցներով նպաստել հողի մեջ գցված հատիկի աճին և միաժամանակ հաղորդակցվել բնության այդ պահի խիստ ակնառու գորությանը:

Համբարձման չորեքշաբթի լույս հինգշաբթի գիշերը համարվում էր այդ գորության խտացված արտահայտության պահը՝ դա գուշակությունների, հրաշքների ու կախարդանքի գիշերն էր, մեկը մյուսից խորհրդավոր, դրական ու բացասական: Հավատում էին, որ տարին մի անգամ, Համբարձման գիշերը, աստղերը երկնականարի տարբեր կողմերից գալիս միանում, ջերմ համբույրով գրկախառնվում էին և դարձյալ վերադառնում իրենց տեղերը: Այդ համբույրին ականատես մարդկանց տվյալ պահին արտահայտված բոլոր խնդրանքներն իբր կատարվում էին: Համբույրի պահին ողջ տիեզերքը մի ակնթարթ կանգ է առնում, կանգ են առնում և մի պահ շունչները պահում ծառ ու ծաղիկ, ջրերը, մարդիկ ու անասունները, որին անմիջապես հաջորդում է համընդհանուր ողջագուրանքը, համբուրվում, միմյանց ողջունում են երկինքն ու երկիրը, ծառերն ու ծաղիկները...

Անմիջապես հետո ծառերն ու ծաղիկները սկսում են խոսել, միմյանց պատմել, թե իրենք ի՞նչ ցավի դեղ են, կամ իրենց արմատիմոտ ի՞նչ կա, և իբրև թե այդ պահին կարելի է հասկանալ նրանց լեզուն: Այդ գիշեր բազմաթիվ կանայք

դուրս էին գալիս դաշտերը բուժիչ խոտեր հավաքելու: Հատուկ բուժիչ, առատացնող գորություն էր վերագրվում այդ գիշեր նստած ցողին, որը հավաքում, ջրի հետ խառնելով յոդանում էին, լվանում մագերը, իսկ բորոտները թավալվում էին ցողով օժված կանաչների վրա: Հավաքում էին մեծ քանակությամբ ծաղիկներ և միմյանց ծաղկեփնջեր նվիրաբերում, ծաղիկների, կանաչների և այլ միջոցներով գուշակություններ էին անում իրենց ապագայի վերաբերյալ: Համբարձման գիշերը գործույնյա էին դառնում նաև չար ուժերը: Ըստ ժողովրդական պատկերացումների նրանք կարող էին հարս ու աղջիկ փախցնել, կովերի կաթը ցամաքեցնել և այլն, ուստի մարդիկ դիմում էին նաև չարխափան միջոցների: Վանում, օրինակ, կանայք ավել էին հեծնում և յոթ անգամ տան շուրջը պտտվում տունը չարքերից պաշտպանելու համար, շատերն անասունները գոմից հանում և ողջ ընտանիքով անասունների հետ միասին բացօթյա էին անցկացնում վստահ, որ չարքերը բաց տարածությունում անուժ են դառնում: Առավոտը բոլոր ընտանիքներում սկսվում էր կաթնապուր եփելով: Որոշ տեղերում կաթնապուրը եփում էին խմբովի, թաղերով կամ հարևաններով, և մի քանի շերտի շաղ տալիս արտերի շուրջը, նախ հնձի առատությունն ապահովելու նպատակով, ապա արտը մորեխից ու կարկտից պաշտպանելու համար: Բոլոր դեպքերում այդ օրվա կաթնապուրը մատաղ էր, այն բաժանվում էր առնվազն յոթը տեղ:

Շատ ընտանիքներում Չատիկից մինչև Համբարձում կաթնապուր չէին եփում և Համբարձմանն առաջին անգամ եփվող կաթնապուրն ուտվում էր հատուկ հանդիսավորությամբ: Հատկանշական է, որ այս տոնին կենդանի չէին զոհաբերում, առհասարակ կենդանի չէին մորթում, կարծես բնության բեղունության շրջանն անխաթար պահելու մտահոգությամբ: Սկսվում էր Համբարձման հինգշաբթին, մարդկանց ու անասուններին ծաղիկներով զարդարելու, տնետուն շրջելով ծաղկեփնջեր նվիրաբերելու, ծաղիկը երգելով գովելու և բախտագուշակ վիճակահանության օրը: Ցող ու ծաղիկ լցված և կենտրոնում բազմած «Արուս» կոչվող տիկնիկով փարչերի շուրջ խմբված

աղջիկների բախտագուշակ քառատող Երգերից հետո փարչից հանվող նշանները, ըստ երգի բովանդակության, նշանի տիրոջը երջանկություն էր ավետում կամ դժբախտություն կանխագուշակում:

Վարդավառ

(պայծառակերպության տոն)

Հայկական ավանդական տոների շարքում Պայծառակերպության տոնը խոշոր ամառային տոն է, որը տոնվում է Չատկից 14 շաբաթ հետո: Նախաքրիստոնեական Հայաստանում այս տոնը կապվում էր հեթանոսական Անահիտ աստվածուհու հետ, ում հեթանոսական տաճարն էին գնում երիտասարդներն ու տարեցները ուխտագնացության: Վարդավառ անունը ունի երկու նշանակություն՝ վարդերով վառված և ջուր ցողել: Լեգենդի համաձայն հայկական Աստղիկ աստվածուհին սեր էր տարածում վարդի ջուր ցողելով և վարդեր նվիրելով: Վահագն Աստվածը պահել էր այդ սերը՝ վիշապների դեմ պայքարելով: Տոնը ձևավորվել է քրիստոնեության ընդունումից հետո: Այժմ վարդավառի ժամանակ բոլորը ջուր են ցողում միմյանց վրա վաղ առավոտից, և ոչ ոք չպետք է նեղանա կամ վիրավորվի այդ չարանճիխության համար:

Խաղողօրհներ

Աշխարհի բազմաթիվ ժողովուրդների մեջ ավանդաբար պահպանված սովորույթ կա. հասունացած առաջին բերքը, առաջին պտուղները գոհաբերել ուխատողերում կամ պաշտամունքի այլ վայրերում, որից հետո էին միայն ճաշակում իրենք: Տարբեր ժողովուրդներ տարբեր պտուղներ էին գոհաբերում՝ հատիկներ կամ մրգեր, իրենց համար առավել կենսական, առավել կարևոր, ինչպես հրեաները ցորեն, գարի, խաղող, թուզ, նուռ, ձիթապտուղ, պարսիկները՝ նուռ, խաղող և այլն: Հայոց մեջ տարբեր տոների գոհաբերվող մթերքներից էին փոխինձը՝ Սբ Սարգսին, ձուն Չատիկին, կաթնովը՝ Համբարձմանը, խնձորը և ցորենը՝ Վարդավառին և այլն, իսկ խաղողին կամ խաղողաքաղին նվիրված էր հատուկ տոն խաղողօրհները, որը նշվում է օգոստոսի 15-ին հաջորդող

կիրակի օրը: Քրիստոնեության ընթացքում ընդհանրացված սովորույթ էր դարձել խաղողի առաջին ողկույզները քահանային օրհնել տալ, ինչը, անշուշտ, շարունակությունն էր նախկինում տաճարներում կամ ուխտավայրերում նվիրաբերելու սովորույթի: Խաղողն օրհնել տալը, սակայն, տոնի հանդիսության սուկ մակերեսային դրսևորումն էր, իրականում այս տոնը ուխտավայրեր այցելելու և գվարճանալու օր էր: Ճատ տեղերում մարդիկ օրերով պատրաստվում էին օգոստոսյան ուխտագնացությանը, իսկ բուն տոնի օրը վեր էր ածվում ուրախ, անվերջանալի գվարճահանդեսի: Մտերիմների, ազգականների, պարզապես ծանոթների խմբերը, նախապես ընտրելով իրենց տոնական ուխտավայրերը, խմբերով ճանապարհ էին ընկնում, երբեմն ամբողջ գիշեր գնալու պայմանով, որպեսզի արևածագը դիմավորեին նշանակված վայրում: Գիշերային այդ երթերը ինքնին տոնական տրամադրություն էին ստեղծում, կարելի է ասել նույնիսկ տոնական հանդիսության մասն էին կազմում: Այդ ընթացքում երիտասարդները մտերմանում էին, կատակները, երգերը ուղեկցում էին ճանապարհորդներին: Առավոտյան ուխտավայրերում հավաքված բազմությունը արևածագը դիմավորում էր արդեն տոնական տրամադրությամբ և խնջույքի պատրաստություններով: Մինչ մեծահասակները մատաղներն էին անում, սեղանի պատրաստություն տեսնում, երիտասարդները մի խմբում խաղում էին լախտի, ըմբշամարտ, գոտեմարտ և այլն, մեկ այլ խմբում՝ պարում...

Կեսօրին խմբերով նստում էին խնջույքի, որի կերակրատեսակների մեջ աչքի էր ընկնում գաթան, հավվան, կաթնասերը, մատաղի միսը և, իհարկե, մեծ քանակությամբ մրգեր ու հատկապես խաղող: Սկսվում էր մթերքների տողանցը մի խմբից մյուսին, ուղարկվում էին մատաղի միս, կաթնամեղերք, մրգեր, բայց անհրաժեշտաբար՝ խաղող: Հատկապես խնամիները խիստ պարտավորված էին միմյանց պատվել նոր պտուղներով և նորապսակ հարսը կամ նշանված աղջիկը ամուսնու կամ փեսացուի ազգականներից մեծաթիվ սկուտեղներ էր

ստանում մրգերով ու որևէ նվերով ծանրաբեռնված: Առհասարակ այս տոնը յիաբուռն, անկաշկանդ ուրախության դրսևորումն էր նվագագույն պարտավորություններով:

Խաչվերաց

Սեպտեմբերի 14-ին հաջորդող կիրակի օրը մեր ժողովուրդը դը նշում է քրիստոնեական տոնացույցում Խաչվերաց, ժողովրդական Սբիսէշ կամ Ուլոց անուններով հայտնի տոնը: Խաչվերացի տոնը նվիրված է Քրիստոսի խաչի գերեզարձին: Հայտնի է, որ Պարսկաստանի Խոսրով Բ Փարուիզ թագավորը 610 թվականին հարձակվում է Բյուզանդիայի վրա, 614 թվականին գրավում Երուսաղեմը և ավարի առնում Քրիստոսի խաչափայտը: Բյուզանդիայի Հերակլոս կայսրը (610-641) խաչափայտը ազատագրելու համար հարձակվում է Պարսկաստանի վրա: Բյուզանդական բանակի մի մասն էին կազմում նաև Հայաստանի հունական բաժնի գնդերը գորավար Գնունու ղեկավարությամբ:

Կայսրը նվանում է Պարսկաստանը և պարսիկներին ստիպում խաղաղության դաշինք կնքել: Դաշինքի հիմնական կետերից մեկը խաչափայտի վերադարձն էր: Հերակլոս կայսրը, խաչափայտն առնելով, նախ տանում է Կ.Պոլիս և այնտեղից փոխադրում Երուսաղեմ: Փոխադրության ժամանակ, որն անցնում էր նաև Հայաստանի տարածքով, տեղի են ունենում մեծ հանդիսություններ: Այդ դեպքի հիշատակը հավերժացնելու համար հաստատվում է Խաչվերացի տոն (սեպտեմբերի 14) քրիստոնյա բոլոր եկեղեցիների համար: Հայոց եկեղեցին Խաչվերացը տոնակատարում է սեպտեմբերի 14-ից սեպտեմբերի 17-ի ընթացքում հանդիպող կիրակի օրը: Բուն տոնի հիմքում ընկած է Խաչի գյուտի պատմությունը և այդ գյուտի առթիվ՝ ցնծության ու գոհունակության արտահայտությունը: Ժողովրդական արարողակարգում արտահայտվում է հանգուցյալների վերաբերյալ մեր ժողովրդի պատկերացումների մի մասը, երբ տնտեսական տարին ավարտած, բերքը հավաքած մարդիկ այդ բերքից ու տարվա նոր պտուղներից, կարձեք, մաս էին հանում հանգուցյալներին: Հիրավի, Սբիսէշ կամ Ուլոց տոնի

առանցքը գերեզմանատուն այցելելն էր և այստեղ խնջույք կազմակերպելը, ուրախ խնջույք, քանզի այդ օրվա գերեզմանատուն այցելելն ուրախության պարտադիր մաս ունէր իր մէջ: Նախապատրաստություններն սկսվում էին շաբաթ օրը, կանայք խմորեղեն էին թխում, տղամարդիկ ուլ մորթում: Ուլն այդ օրվա առանձնահատուկ, անցյալում անհրաժեշտ ուտելիքն էր, առանց որի տոնը լիարժեք չէր կարող լինել: Մաշկված, մաքրված ուլը կախում էին թոնքում տակը նախապես ձավարեղենով լի կաթսան դնելով: Վաղ առավոտյան լավագույն նախաճաշն ուլի ճարպով ներծծված ձավարի փլավն էր, որից հետո բոլորը գնում էին գերեզմանատուն հետները ունենալով մրգեր, խմորեղեն, կաթնասեր, խորոված ուլ: Քահանայի կողմից գերեզմաններն օրհնելուց հետո ուղղակի տապանաքարերի մոտ բացվում էին սփռոցները և սկսվում էին ուրախ, անկաշկանդ, կատակներով ու հյուրասիրություններով ուղեկցվող խնջույքները: Նախնիներին, մահացած հարազատներին նոր բերքից մաս հանելով, նրանց հիշատակին ուլ զոհաբերելով նրանց հաղորդակից էին դարձնում իրենց այս աշխարհիկ կյանքին:

Տյառնըդառաջ (տրնդեգ)

Ըստ կրոնական ավանդույթների՝ այս տոնը կապած է Տիրոջն ընդառաջ գալու հետ՝ իր ծնունդից 40 օր հետո: Հայկական եկեղեցին այդ տոնը նշում է փետրվարի 13-ին: Տոնին ցատկում են կրակի վրայով և չբեր կանայք, և ասվում է, որ դրանից հետո Աստված նրանց երեխա է պարգևում: Դա շատ հին և հետաքրքիր հայկական տոն է: ի հիմնական արարողությունը կրակ վառելն է, որը խորհրդանշում է գարնան սկիզբը:

Սուրբ Սարգսի Տոն

Սուրբ Սարգիսը երիտասարդների շրջանում սիրված ավանդական տոներից է:

Այն տոնվում է Չատիկից 63 օր առաջ, կիրակի օրը՝ հունվարի 18-ից մինչև փետրվարի 23-ը ընկած ժամանակահատվածում: Տոնին նախորդող գիշերը

երիտասարդներն ուտում են աղի բլիթ, որպեսզի երազ տեսնեն: Նրանք հավատում են, որ Սուրբ Սարգիսը որոշում է իրենց ճակատագիրը, և որ այն անձնավորությունը, ով նրանց երազում ջուր կտա, կդառնա իրենց ապագա կողակիցը: Մարդիկ նաև այլուրով սկուտեղ են դնում իրենց տան մոտ, որպեսզի Սուրբ Սարգիսը իր ձիով անցնի վրայով: Նրանք հավատում են, որ Սուրբ Սարգիսը անցնում է իր հրեղեն ձիով և հետք է թողնում այլուրի վրա, որը և նրանց հաջողություն է բերում: Շատերի պատկերացմամբ Սուրբ Սարգիսը գեղեցիկ է՝ նիզակով, ոսկյա գլխածածկով և ոսկյա գրահով:

Բարեկենդան

Բարեկենդանը մեր ժողովրդի սիրված և սպասվող տոներից մեկն էր: Այն ընկալվում էր որպես ամենաազգային և երջանկաբեր տոն: Բարեկենդանի օրերը ժողովրդի երգերում համարվում էին «Հայոց ազգի օրեր» և տևում էին երկու շաբաթ, անմիջականորեն հաջորդելով Սբ Սարգսին և ավարտվելով Մեծ պատվ: Այդ օրերը հազեցած էին լինում ուրախությամբ, պարերով, խաղերով, կերուխումերով, զվարճահանդեսներով, թատերախաղերով, փոխայցելություններով, հրապարակային խնջույքներով և այլն: Տոնական այդ մթնոլորտում հասարակական, ընտանեկան, տարիքային փոխհարաբերությունների ընդունված նորմերը գլխիվայր էին շուռ գալիս և ամենուր տիրում էր մարդկանց պահվածքի ազատություն: Ի հակադրություն առօրյա կենցաղում գործածվող անպանույճ, բուսական պարզ ուտեստեղենի, Բարեկենդանի երկշաբաթյա շրջանում հիմնականում օգտագործվում էին մսեղեն, յուղ, կաթնամթերք, տեսակ-տեսակ խմորեղեն: Տոնական խնջույքները գերազանցապես ուղեկցվում էին ժողովրդի լայն գանգվածների մասնակցությամբ: Սեղանները, չնայած ձմռան ցրտերին, բացվում էին բացօթյա, կալերում, խնջույքները տևում էին ժամեր շարունակ և դրանց մասնակիցների կազմը օրվա մեջ մի քանի անգամ փոխվում էր: Տոնի մյուս առանձնահատկությունը հարսանիքների առատությունն էր, որոնք նոր թափ էին հաղորդում հորդուն ուրախությանը: Ուրախ պարերը, որ

Բարեկենդանի խնջույքների անբաժան ուղեկիցներն էին, հարսանիքներին ի մի էին հավաքում բոլոր երիտասարդներին: Բայց միայն երիտասարդները չէ, որ մասնակցում էին պարերին: Բարեկենդանի պարերն իրենց շրջապտույտի մեջ էին առնում կանանց ու տղամարդկանց, երեխաներից մինչև զառամյալ ծերերը: Պարերը սկսվում էին հենց առաջին օրը և օրեցօր աշխուժանում, բազմամարդ դառնում ինչպես կատարողներով, այնպես էլ հանդիսատեսներով, խրախուսողներով: Պարում էին թե գունա-դեղին և թե խմբերգերի նվագակցությամբ, իսկ տոնի վերջին շաբաթ-կիրակի օրերը գյուղի ամբողջ թաղեր շղթայվում էին կլոր խմբապարերով: Վերջին օրը նշանավորվում էր զառամյալ ծերունիների խմբապարերով: Ծերունիները մի հսկա շղթա կազմած շրջում էին ողջ գյուղում՝ յուրաքանչյուր տան առաջ գինի խմելով, իսկ 80-90 տարեկան պառավների յուրօրինակ պարն ուղեկցվում էր բնորոշ պարերգով:

Մեծ պաս

Բարեկենդանի անհոգ ուրախությանը, զվարճախաղերին, անհագուրդ խրախճանքներին, կենցաղային թեթևամտությանը, հասարակական սովորույթների ավան-դական կարգի խախտումներին փոխարինելու էր գալիս տարեկան պասերից ամենաերկարատևը՝ Մեծ պասը: Այն ինքնամաքրման, ինքնագոհաբերման, սպաշխարության, մաքրակենցաղության և ինքնագույնանման յոթշաբաթյա շրջան է: Մեծ պասի հենց առաջին օրը հաշտություն, համերաշխություն սահմանելու օր էր, զժտություններն ու թշնամությունները մեղմելու, հասարակության մեջ ներդաշնակ բարեկամական հարաբերությունները վերականգնելու օր: Միջնորդները գործի էին անցնում, հանդիպեցնում նույնիսկ թշնամիներին: Ոչ ոք չէր կարող խուսափել այդ սովորույթից, այլապես կգրկվեր Մեծ պասի ավարտին հաղորդվելու իրավունքից: Նույն օրը հոգևոր մաքրությանը ուղեկցում էր առարկայական մաքրության սովորույթը: Բարեկենդանը վերջացել է, և Մեծ պասի հենց առաջին օրը ջանում էին վերացնել բարեկենդանյան

զեխություն հետքերը լվանալ բոլոր ամանեղենը, լվացք անել, լողանալ, մաքրել տան ու բակի բոլոր անկյունները և այդպես մաքուր դիմավորել ինքնագազաման շրջանը: Պաս էր և արգելքի տակ էին կենդանական ծագում ունեցող բոլոր ուտելիքները, դրանց փոխարինելու էին գալիս բանջարեղենը, ձեթը: Մեծ պասի քառասունինն օրերին պիտի ուտեին յոթուց, ոսպ ու սիսեռից, կարտոֆիլից ու գետնախնձորից, սոխ ու սխտորից, ձավարեղենից, զանազան չորացրած ու թթու դրած կանաչեղենից պատրաստվող փլավներ, սպուրներ, տապակած կերակրատեսակներ, և հատկապես՝ հոշակավոր մախոխ-ապուրը:

Մախոխը տարբեր տեղերում տարբեր կերպ էին պատրաստում, բայց այն Մեծ պասի ուղեկիցը, խորհրդանշական ճաշատեսակն էր ամեն տեղ: Շատ վայրերում կորկոտը լավ եռացնելուց հետո սառեցնում էին, շաղախում թթխմորով և լցնում կարասը, թողնելով, որ այն խմորվելով թթվի: Ոմանք էլ թթխմորով շաղախելուց հետո գնդեր էին շինում ու չորացնում, և անհրաժեշտության դեպքում ջրով բացում էին այդ գնդերը: Համարյա ամենուր այս ծիսական ճաշատեսակին ուղեկցում էին որոշակի ծեսեր: Օրինակ, շատերը հետևում էին, որ պասի ընթացքում մախոխը ուտելու և հատկապես պատրաստելու թիվը գույգ չլինի, այլ անպայման՝ կենտ: Ուրիշները մախոխը պատրաստելուց և կարասը լցնելուց հետո կանչում էին երեխաներին, որ նրանք կարասի մոտ մի քանի անգամ էշի նման խռանչեն, որպեսզի, իբր, մախոխը շուտ թթվի: Իսկ կարնոհայերը հատուկ մախոխապուրի պար ունեին, որ պարում էին միայն Մեծ պասի առաջին օրը: Մախոխապուրի պարը պարել են բացառապես տղամարդիկ, ընդորում՝ համայնքի, գյուղի բոլոր տղամարդիկ, հիմնականում չափահասներից մինչև ծերերը, պարել են մախոխապուրին նվիրված երգը երգելով, առանց նվագի: Մախոխապուրի պարերգով զովերգել են Մեծ պարը, նրա հիմնական ճաշատեսակը մախոխը: Պարը կատարել են խումբ-խամբ, կյոր-փակ շրջանով: Յուրաքանչյուր խումբը կատարել է յոթ պտույտ և հեռացել պարատեղից տեղը զիջելով հաջորդ խմբին: Ինչպես իրենք կարնոհայերն էին ասում, «կանանց օրենք

չէր, որ պարեհին, ամոթ էր, սուրբ օր էր: Պարել են խաղ ասելով (երգելով), այդ օր տիգ, չալդի երաժշտական գործիքներ ածելու իրավունք չկար»:

Հարսանյաց Արարողություն

Հայկական եկեղեցում սա վառ արտահայտված արարողություն է, որը քայլ առ քայլ տանում է դեպի ամուսնու և կնոջ նոր կյանք:

Խորհուրդ մատնանշում է սերը, որը դեռ փորձված չէ սուրբ միության մեջ: Արարողության յուրաքանչյուր կետ ունի իր նշանակությունը:

Օրհնվելուց հետո տեղի է ունենում ամուսնական մատանիների փոխանակում հարսի և փեսայի միջև, որը խորհրդանշում է ամուսնական կյանքում ամուսինների միմյանց լրացները: Նրանցից յուրաքանչյուրը պետք է հարստացնի միությունը: Արարողության ընթացքում և նաև դրանից հետո երիտասարդ զույգի ձեռքերի միավորումը խորհրդանշում է միություն: Թագադրման արարողությունը համարվում է ամուսնական ամենագեղեցիկ սովորույթը: Հարսն ու փեսան թագադրվում են ինչպես թագավոր և թագուհի իրենց փոքր թագավորությունում՝ տանը, որտեղ նրանք պետք է թագավորեն իմաստությամբ, ազնվությամբ և արդարությամբ: Ամուսնական արարողության ընթացքում հարսն ու փեսան կանգնած միմյանց դեմառդեմ, իսկ քահանան նրանց միջև՝ խաչը ձեռքին: Թագադրման արարողությանը հետևում է ընդհանուր բաժակի օրհնումը, երբ գինու գավաթը օրհնվել էր և այդ արարողությանը ներկա էր գտնվել Քրիստոսը: Ընդհանուր գինու գավաթից խմելը խորհրդանշում է, որ զույգն այսուհետ պետք է կիսի ամեն ինչ՝ ուրախություն, ինչպես նաև տխրություն: Արարողության ավարտին քահանան օրհնում է զույգին՝ խնդրելով Աստծուց, որպեսզի պաշտպանի նրանց և իր հովանու տակ առնի: Այսպիսով Աստծո օրհնությունը փոխանցվում է նրանց, որպեսզի ապրեն սիրով և միասին՝ փոխադարձաբար լրացնելով միմյանց:

Մկրտություն կամ Կնունք

Մկրտություն նշանակում է «վազում», «մաքրություն», որը կատարվում է ջրով՝ սրբելու, մաքրելու համար մկրտվողի մեղքը, որը կոչվում է առաջին կամ սկզբնական մեղք: Մկրտությունը կոչվում է նաև վերստին ծնունդ, որովհետև մկրտվողը սրբվում է, մաքրվում իր մեղքերից և նորից ծնվում Սուրբ Ավագանից: Այս նոր և հոգևոր ծնունդը մկրտվածին դարձնում է Քրիստոսի եկեղեցու անդամ:

Մկրտությունը Հայ Առաքելական եկեղեցում կատարվում է քահանայության աստիճան ունեցողի ձեռքով: Մկրտվելով՝ մարդիկ ոչ միայն մաքրվում են մեղքերից և որդեգրվում Աստծուն, այլև եղբայրանում են իրար՝ որպես Սուրբ Ավագանից ծնվածներ: Քրիստոնեական եկեղեցում մարդկանց հավասարության, եղբայրության և արդարության խորհուրդներն իրագործվում են մկրտության արդյունքում:

Դրոշմը մկրտության անբաժան մասն է: Ջրով մկրտվելուց անմիջապես հետո երեխան դրոշմվում է կամ օծվում մյուռոնով կամ սուրբ յուղով: Դրոշմը նաև նշանակում է կնիք, և այս պատճառով մկրտությունը կոչվում է նաև կնունք: Դրոշմը խորհրդավորում է Սուրբ Հոգու շնորհը: Սուրբ Հոգին հայտնվեց Փրկչի Մկրտության ժամանակ և աղավնակերպ իջավ Նրա վրա: Սրբալույս մյուռոնը խորհրդանշում է Սուրբ Հոգու էջքը մկրտվածների վրա:

Մյուռոնի բուն նյութը ձիթենու յուղն է՝ ձեթը, բայց նրա հետ նաև խառնում են 40-ից ավելի անուշահոտ նյութեր (ծաղիկներ, արմատներ), որոնցից ամենագլխավորը բալասանն է: Հայ Առաքելական Սուրբ եկեղեցում մյուռոն պատրաստելու և օրհնելու իրավունքը վերապահված է կաթողիկոսին:

Հայաստանի Հանրապետությունում սահմանված տոներն ու ոչ աշխատանքային օրերը

• Ամանոր և Ծննդյան տոներ՝ նշվում են դեկտեմբերի 31-ից հունվարի 2-ը ներառյալ (Ամանոր), հունվարի 3-ին, 4-ին և 5-ին (նախաձննդյան տոներ) և հունվարի 6-ին (Սուրբ Ծնունդ և Հայտնություն), ոչ աշխատանքային օրեր:

• Սուրբ Ծննդյան և Հայտնության տոնին հաջորդող՝ Մեռելոց հիշատակի օր՝ նշվում է հունվարի 7-ին, ոչ աշխատանքային օր:

• Բանակի օր՝ նշվում է հունվարի 28-ին, ոչ աշխատանքային օր:

• Մայրենի լեզվի օր՝ նշվում է փետրվարի 21-ին:

• Ադրբեջանական ԽՍՀ-ում կազմակերպված ջարդերի զոհերի հիշատակի և բռնագաղթված հայ բնակչության իրավունքների պաշտպանության օր՝ նշվում է փետրվարի 28-ին:

• Կանանց տոն՝ նշվում է մարտի 8-ին, ոչ աշխատանքային օր:

• Մայրության և գեղեցկության տոն՝ նշվում է ապրիլի 7-ին:

• Ցեղասպանության զոհերի հիշատակի օր՝ նշվում է ապրիլի 24-ին, ոչ աշխատանքային օր: 1915 թվականի այս օրը և հետագա մի քանի օրում Օսմանյան կայսրության պարագլուխների

հրամանով Կ.Պոլսում ձերբակալվեցին և դեպի Միջագետքի անապատներն աքսորվեցին շուրջ 800 հայ մտավորականներ գրողներ, գիտնականներ, լրագրողներ, արվեստագետներ, որով սկսվեց Մեծ եղեռնը: Նրանց մեծ մասն սպանվեց արքորի ճանապարհին: Ապրիլի 24-ը յուրաքանչյուր տարի նշվում է Հայաստանի Հանրապետությունում. Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և Սփյուռքում որպես Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օր:

• Աշխատանքի օր՝ նշվում է մայիսի 1-ին, ոչ աշխատանքային օր:

• Երկրապահի օր՝ նշվում է մայիսի 8-ին:

• Հաղթանակի և խաղաղության տոն՝ նշվում է մայիսի 9-ին, ոչ աշխատանքային օր: 1945 թվականի մայիսի 9-ին ֆաշիստական Գերմանիայի պարտությամբ ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը Եվրոպայում: Մայիսի 9-ին հայ ժողովուրդը հարգանքի տուրք է մատուցում իր բազմահազար զավակներին, որոնք Խորհրդային Միության և դաշնակիցների զինված ուժերի շարքերում մարտնչել են ֆաշիզմի դեմ:

• Ընտանիքի օր՝ նշվում է մայիսի 15-ին:

• Հանրապետության տոն՝ նշվում է մայիսի 28-ին, ոչ աշխատանքային օր: Այդ օրը 1918 թվականին հռչակվեց Հայաստանի անկախությունը, պատմական Հայաստանի տարածքի մի փոքր մասում վերականգնվեց հայկական պետականությունը՝ Բագրատունյաց թագավորության անկումից շուրջ 9 հարյուրամյակ հետո: Առաջին Հանրապետությունը գոյություն ունեցավ երկու և կես տարի՝ մինչև 1920 թվականի դեկտեմբերի 2-ը: Այն ընկավ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև հանցավոր գործարքի հետևանքով:

• Երեխաների իրավունքների պաշտպանության օր՝ նշվում է հունիսի 1-ին:

• Բռնադատվածների հիշատակի օր՝ նշվում է հունիսի 14-ին: Հայաստանում պաշտոնապես նշվում է 2006 թվականից: «Դավաճան ժողովուրդների արտաքսման մասին» ստալինյան հրամանագրով 1949-ի հունիսի 14-ին Հայաստանից բռնատար զնացքներով արտաքսվել է 13.000 հայ: Հունիսի 14-ին Էստոնիայից, Լիտվայից, Լատվիայից, Ուկրաինայից, Բելառուսից, Մոլդովայից արտաքսվել է 55.000 մարդ:

• Սահմանադրության օր՝ նշվում է հուլիսի 5-ին, ոչ աշխատանքային օր: Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին կայացած հանրաքվեով: Սահմանադրության առաջին հոդվածն ազդարարում է, որ Հայաստանի Հանրապետությունը «ինքնիշխան, ժողովրդական, սոցիալական, իրավական պետություն է»:

• Գիտելիքի և դպրության օր՝ նշվում է սեպտեմբերի 1-ին:

- Անկախության տոն՝ նշվում է սեպտեմբերի 21-ին, ոչ աշխատանքային օր: Հայաստանի Հանրապետության անկախությունը հռչակվել է 1991 թվականի սեպտեմբերի 21-ին կայացած համաժողովրդական հանրաքվեով:
 - Ուսուցչի օր՝ նշվում է հոկտեմբերի 5-ին:
 - Թարգմանչաց տոն՝ նշվում է հոկտեմբերի երկրորդ շաբաթ օրը:
 - Տեղական ինքնակառավարման օր՝ նշվում է նոյեմբերի 10-ին:
 - Երկրաշարժի գոհերի հիշատակի օր՝ նշվում է դեկտեմբերի 7-ին: Պաշտոնական տվյալների համաձայն երկրաշարժի գոհ է դարձել 25 հազար մարդ, հանրապետության տնտեսությունը հսկայական վնաս է կրել: Այդ ծանր օրերին Հայաստանին օգնության ձեռք են մեկնել հայ սփյուռքը, բազմաթիվ երկրներ, միջազգային կազմակերպություններ, բարեգործական ընկերություններ և միություններ, Հայաստանյանց Առաքելական եկեղեցու թեմեր: Վերականգնման աշխատանքները աղետի գոտում շարունակվում են:
 - Սուրբ Վարդանանց տոն՝ բարի գործի և ազգային տուրքի օր՝ նշվում է Սուրբ Չատիկից 8 շաբաթ առաջ՝ հինգշաբթի օրը:
 - Սուրբ Էջմիածնի տոն՝ նշվում է Սուրբ Չատիկից 64 օր հետո՝ կիրակի օրը:
- Հայաստանի Հանրապետությունում կարող են նշվել նաև ավանդական և եկեղեցական տոներ, միջազգային օրեր, իսկ կառավարության որոշմամբ՝ մասնագիտական և այլ տոներ ու հիշատակի օրեր:

Իրանահայ ավանդական ընտանիքը¹

Պարսկաստանի հայերը բռնագաղթի սկզբնական իսկ օրերից մինչ օրս եղել են ավանդապահ եւ մանավանդ գավառներում պահել էին իրենց նահապետական կյանքն ու ապրելաձեւը, մասամբ էլ նրանք յուրացրել են տեղական պայմանները տարրերը:



Գրքի հեղինակը իր հայրական գյուղական տանը
Քյանդղներ գյուղում, Քյամարա, Իրան

Գյուղերում յուրաքանչյուր մի տուն բաղկացած է եղել մի քանի ընտանիքից: Ամուսնացած եղբայրն ու հորեղբայրը ընդհանրապես երկար ժամանակ ապրում էին միասին, աշխատում էին ըստ հնարավորին ուշ բաժանվել

¹ - Էդիկ Բաղդասարյան, *Իրանահայ Համայնքի Անբողջական Պատմություն*, 10 հատորով, հատոր 8, Տրդունտ, 2012.

միմյանցից: Ապրել բազմանդամ ընտանիքով, գործող ձեռքերի պակաս չունենալու համար:

Հողագործությունը պահանջում էր, որ ընտանիքը լինի բազմանդամ, այդ պատճառով էլ գյուղացին ինչքան շատ զավակներ ունենար, այնքան գործը հաջող էւ բավարար աշխատող ձեռքեր կունենար: Տղան թե աղջիկը, դեռեւս 6-7 տարեկանից , գյուղացու համար օգնական ձեռք էին մահամարվում եւ իր տեղն ունեին ընդհանուր աշխատանքների մեջ:

Ընտանիքի անդամների թիւը երբեմն հասնում էր մինչեւ 20-30 հոգու: Օրինակ՝ 1946 թ. ներգաղթի ժամանակ, Փերիայի Ազնավուլ գյուղում գտնվող մի ընտանիք բաղկացած է եղել վեց ամուսնացածների զավակներից, դրանք էին չորս եղբայր եւ երկու եղբորորդիներ իրենց կանանոցով ու երեխաներով:

Գյուղացիներն իրենց զավակներին ամուսնացնում էին շատ վաղ, հազիվ 15-16 տարեկան հասակում, գործող ձեռքեր ավելացնելու նպատակով¹:

Նահապետական գերդաստանի մեծն էր համարվում մեծ հայրը, որը դառնում էր ղեկավարող դեմքը ամբողջ գերդաստանում: Նրա հեղինակության ներքո էին կարգավորվում դաշտային եւ ընտանիքի բոլոր գործերը: Նրա մահից հետո ընտանիքի պատասխանատվությունը փոխանցվում էր մեծ որդուն: Ամուսնացող որդիները մնում էին հոր տանը: Հարսների ու փոքրահասակների կառավարումը մտնում էր մեծ մոր կամ ‘նան’-ի լիազորությունների մեջ: Նրա հսկողության ներքո էր գտնվում պահեստի բոլոր նյութերը, նաեւ սեղան բացում հյուրերի առաջ, կերակուր տալիս մշակներին, հոգում հարսների, աղջիկների ու թոռների ծախսերը: Նա էր որոշում յուրաքանչյուր հարսի պարտականությունը, աշխատանքի բաժինը եւ հսկում տան աշխատանքներին: Մեծ հարսը մնում էր ‘նան’-ի խորհրդակցի դերում, որի մահից հետո , տան զեկը անցնում էր նրա ձեռքերը:

¹ - Նույն տեղում, էջ 383:

Ընդհանրապես հարսը տան մեջ ստրուկի կյանք ուներ, հյու հնագանդ կերպով տանում էր ամեն ձեւի վերաբերմունք, եւ չէր հանդգնում գանգատվել: Ընտանիքի դատարանում միշտ նա էր որ մեղադրվում էր:

Ավանդական սովորության համաձայն ամուսինը իր կնոջ անունը չէր տալիս, այլ նրան կանչում էր երկրորդ դեմքով: Նույնպես էլ անում էր կինը: Գավառական կյանքը, իր տոհմիկ բարքերով հենված է եղել անցյալից ժառանգած ավանդական սովորությունների վրա, որի հիմնական առանցքն էր կազմել փոխադարձ սերը, հարգանքը եւ պատվախնդրություն միմյանց հանդեպ:

Բարեկամական կապը ամուր ու անկեղծ է եղել, յուրաքանչյուր հայկական գյուղում, ժողովուրդը ապրել է որպես մի ընտանիք, արյունակցությամբ, բարեկամական, խնամիական, եւ քավորական իր հին կապերով: Ուրախություն ու տխրությունը նրանք բաժանել են իրար մեջ, որքան էլ որ հեռու են եղել իրարից, կարիքի դեպքում իրար օգնելու էին հասնում, մասնակցում իրենց ընդհանուր հասարակական, տնտեսական եւ ծիսական ու տոնական միջոցառումներին:

Հայ գյուղացիները տքնաժամորեն աշխատում էին հանդերում, արտերում, դաշտում, այգիներում եւ տնական տնտեսություններում զարնանից մինչեւ աշնան կեսերը, բերքահավաքից հետո, սկսում էր ցուրտ եղանակը, ուստի նրանք պատսպարվում էին իրենց տներում, զբաղվում էին տնային որոշ աշխատանքներով, հոգ տանում իրենց տնային անասուններին, զբաղվում գորգագործությամբ, ձեռա-գործերով, եւ նմանատիպ աշխատանքներով:

Զմռան համազյուղացիները իրար հյուր էին գնում, ուտում էին աղանդեր, չամիչ ու սիսեռ, եւ այլն: Մեծերը պատմում էին հեքիաթներ, երեխաները ամենայն ուշադրությամբ լսում էին եւ վայելում բացառիկ այդ օրերն ու երեկոները ‘քուրսու’ շուրջ:

Այսպիսով գյուղացին անցացնում էր ձմռան ցուրտ օրերը մինչեւ զարուն, երբ սկսվում էր նոր շրջան ժրաջան աշխատանքի համար:

Ընդյանուր առմամբ տղայի կամ աղջկա ամուսնանալու որոշումը տալիս էին ծնողները, որը տարածված էր բոլոր հայկական գավառներում: Ծնողներն էին որոշում իրենց գավակների համար հարսնացուին կամ փեսացուին, առանց նրանց տեսակետը հարցնելու: Այդուհանդերձ պատահում էին նաեւ սիրավեպեր եւ բնական հունով ամուսնական կյանքի սկզբնավորումներ:

Ժամանակի ընթացքում, երբ գավառի եւ քաղաքի միջեւ ավելի աշխույժ կապեր են առաջանում, ապա գավառի բնակիչները գաղթում են քաղաքներ, հասարակական եւ տոհմային հարաբերությունները խոր փոփոխություն կրեցին, տեղի ունեցավ հին ու նոր սերնդի ճաշակի եւ մտածելակերպի բախում, ընտանիքի գավակներն ու հարսերը ձեռք են բերում ավելի ազատ եւ անկախ իրավիճակ, սակայն չկորցնելով իրենց հարգանքը մեծերի հանդեպ, ամուսնանալով՝ հեռանում էին հայրական տնից եւ իրենց համար առանձին օջախ են կառուցում եւ մեծերն էլ չեն խնայում որեւէ օգնություն իրենց սիրասուն գավակների եւ նրանց նորակազմ ընտանիքի նկատմամբ: Այդ հարգանքն ու սերը ամեն դեպքում երկկողմանի բնույթ է ունեցել մինչ օրս:

Ամուսնությունը Իրանի Հայկական Գավառներում

Ամուսնությունը իրանահայության կյանքում ամենախոշոր երեւույթներից է համարվում: Հարսանյաց հանդեսը իրանահայ գավառներում տեւում էր օրերով եւ երբեմն ոչ միայն պատկան գյուղն էր ապրում խրախճանք, այլեւ մյուս գյուղերն էլ ներքաշվում էին այդ խանդավառությանը:

Գավառում ամուսնությունը կատարվում էր ծնողների կամքով, նրանք էին ընտրում հարսնացուին: Ամուսնացողները չգիտեին ում հետ են կապում իրենց բախտը: Սակայն այս սովորությունն ու ավանդությունը ժամանակի ընթացքում մեղմացել էր: Նախքան ամուսնությունը նախ կատարվում էր խնամախոսություն, սպա նշանադրություն:

Տարվա գլխավոր տոներին, ինչպես՝ ս. Ծնունդ, Բարիկենդան, Չատիկ, Համբարձում, Վարդավառ եւ Աստվածածնին, հարսնացուի սկեսուրը նրա համար 'փայ' այսինքն բաժին էր ուղարկում (գաթա, քաղցրեղեն, չամիչ, նուշ եւ հավա):

Հարսանիքը սովորաբար տեւում էր յոթ օր ու գիշեր, որի ընթացքում 'սագանդարեները' (նվագածուներ) զվարճացնում էին հանդիսությանը: Օգտագործվում էին սրինգ, սազ եւ դափ. սակայն Խորեն վարդապետը աշխատեց վերացնել այս սովորությունը եւ ավելի ազատ մթնոլորտ ստեղծել ընտանեկան եւ հասարակական հարաբերություններում:

Հնում, սովորաբար, տղաներին 15-20, իսկ աղջիկներին 12-15 տարեկան հասակում էին ամուսնացնում եւ հարսնացուի ընտրությունը ծնողների կողմից էր կատարվում:

Տղայի ծնողները մի պերճախոս կնոջ ուղարկում էին աղջկա ծնողների մոտ եւ հավանություն ստանալու դեպքում հարազատներով գնում էին նոր խնամիների տունը: Հարսնացուն ներկայանում էր նրանց եւ «երեստանուկ» էին տալիս եւ նա էլ համբուրում էր տղայի

ծնողների աջը եւ նրանք էլ փոխադարձաբար համբարում էին նրա ճակատը:

Ներկայումս, երբ իրանահայերը ապրում են քաղաքներում, ամուսնության սովորությունները ենթարկվել են հիմնական փոփոխության: Արդեն մի քանի տասնամյակ տարիներ է, որ երբ աղջիկն ու տղան ծանոթանում են հասարակական-մշակութային զանազան միջոցառումների կամ անձնական ձեռնարկների շնորհիվ, նախ տղայի ընտանիքը (հայր, մայր, եղբայր եւ քույր) խնամախոս են գնում եւ դրական պատասխան ստանալուց հետո, տղայի ընտանիքը 'խնամապատիվ' է հրավիրում:

Տոնական օրերին, անցյալի պես հարսնացուի համար 'բաժին' կամ 'փայ' են տանում: Այժմ սովորություն է դարձել նշանադրության եւ հարսանյաց հանդեսները կատարվում են նույն օրը, թեւ լինում են բացառություններ: Առավոտյան քահանայի միջոցով կատարվում է նշանադրության կրոնական արարողությունը հարսնացուի տանը, նվերներ փոխանակվում եւ թեթեւ կերուխում է տեղի ունենում, ապա հարսն ու փեսան քավորի կողմից տրամադրած շքեղ զարդարված ինքնաշարժով շարժվում են դեպի եկեղեցի եւ նախքան այդ կամ եկեղեցական արարողությունից հետո գնում են քաղաքի որեւէ զբոսայգի կամ գեղեցիկ մի վայր նկարվելու համար: Եկեղեցում նրանց սպասում են հրավիրյալները: Քահանան պսակադրության կրոնական արարողությունը կատարում է եկեղեցում, որից հետո բոլորը մեկնում են հարսանյաց սրահը եւ ամբողջ երեկոն անցկացնում կերուխումով, պարով եւ երգով եւ նվերների ճոխ փոխանակությամբ:

Հարկ է նշել, որ անցյալում (Մանավանդ գավառներում) եւ երբեմն էլ այս օրերին տեղի էն ունենում միջանկյալ այլ սովորություններ, օրինակ «Հարսնատես» (նշանադրությունից մի քանի օր հետո, փեսացուի մայրը եւ ազգի կանայք բաժին էին տանում հարսնացուին), 'Փեսատես' (հարսնացուի մայրն ու ազգական կանայք են գնում խնամիների տունը), «բաժին» կամ 'փայ' են տանում

տոնական օրերին փեսացուի համար, այս ավանդական սովորությունը դեռևս հարգվում եւ կատարվում է:

Նախկինում հարսանիքից առաջ կատարվում էր 'Բարգակտրեք'-ը, որով փեսայի հայրը, քավորը եւ քահանան ու մի քանի հոգի ազգականներ գնում էին հարսնացուի տունը հարսանիքի օրը որոշելու համար: Նրանից հետո հարկավոր էր 'Շորաձեւեք'-ը, հարսանեկան զգեստները գնելուց հետո հարսանեկան հրավերներն էին կատարվում:



Հարսանիքը գիւղում. վերջին օրջան



Հարսին պարելով առաջնորդում են եկեղեցի

Որոշ գավառներում երեք օր հարսանիքից առաջ կատարվում էր «Չողվիրիկուն», որի ընթացքում հարսանիքատերերը համագյու-դացիներին ու ազգականներին հրավիրում էին իրենց տունը՝ գիշերը զվարճությամբ և ուրախությամբ անցկացնելու համար: Չարմահալում, մեկ օր հարսանիքից առաջ վաղ առավոտյան աղջկան և տղային առանձին-առանձին տանում էին բաղնիք, որ կոչվում էր «Դաքվորահամամ» և «Հարսահամամ», իսկ իրիկուն կատարվում էր «Ծաղկի իրիկուն» հանդեսը: Պսակի օրը լուսաբացին շաղախում էին հինան մի փոքր գավաթի մեջ, որը մի դեռատի աղջիկ գլխին դնելով սագի նվագակցությամբ, պարելով գնում էին հարսի տունը և հատուկ արարողությամբ հինան քսում էին հարսի երկու ձեռքերի ավերի մեջ և նա էլ հինան քսում էր ձեռքերին:

Անցյալում խնամապատիվը որոշ գավառներում կատարվում էր մի քանի օր հարսանիքից հետո: Հարսանիքի երեկոն, հարսի և փեսայի անմիջական հարազատները սրահից գնում էին փեսայի տունը և մի

քանի ժամ էլ երգում, պարում եւ ուտում-խմում էին (Հարսի իրիկուն)¹:

Հարկ է նշել, որ իբրեւ հայկական հնագույն սովորություն եւ ավանդույթ, Իրանահայության մոտ եւս մինչ օրս պահպանվել է «Օժիտ»-ի սովորությունը: Սովորաբար հայ աղջիկները, շատ վաղ ժամանակներից, մանավանդ իրենց մայրիկի խորհուրդներով եւ օգնությամբ, պատրաստում են իրենց «Օժիտը», իսկ ամուսնության մոտակա օրերին նրանց հարազատներն ու մանավանդ ընտանիքի անդամները տնային անհրաժեշտ նվերներ են տալիս նրանց, որ ամուսնությունից հետո, տանում են իրենց նոր տունը եւ վայելում իրենց ամուսնու հետ: Իհարկե փեսայի ընտանիքն էլ իր հերթին, ըստ իրենց տնտեսական կարողության, նվիրում են անհրաժեշտ կահկարասիներ:

Օժիտի բովանդակությունը ուղղակիորեն կապված է ընտանիքի կարողությունից:

Ծննդաբերություն

Ծննդաբերությանը առնչվող աշխատանքները ստանձնում էին տեղական տատմերերը: Նախքան բուն աշխատանքին անցնելը, նրանք սենյակի չորս պատերից թոնրի ակիջով մի երկար գիծ էին քաշում, որպեսզի չար ոգիները չհամարձակվեն մոտենալ եւ վնասել, դժվարածին կնոջ համար դիմում էին որեւէ գրբացի, որը մի կտոր թելի վրա թուղթ կապելով եւ վրան ինչ-որ աղոթք գրելով, հանձնարարում էր նույն թելը կապել ծննդկանի մեջքին, իսկ թուղթը լվանալուց հետո՝ ջուրը խմեցնել իրեն²:

Ներկայումս ծննդաբերությունից հետո հարսի մայրը կամ փեսայի մայրն ու քույրերը օգնում են ծննդաբեր իրենց հարազատին նորամանուկի խնամքի գործում: Նախկինում

¹ - Էդիկ Բաղդասարյան, *Քյանարա*, էջ 73: Ա. Սարյան, *Չարմահալ*, էջ 501-518, Ավ. քին. Եղգարյան, *Չարմահալ*, էջ 137-153:

² - Էդիկ Բաղդասարյան, *Քյանարա*, էջ 73:

մայրն ու նորամանուկը մինչև 40 օր պիտի մնային տանը եւ դուրս չտարվեին:

Մկրտություն

Հնում սովորաբար երեխայի ծնվելուց յոթ օր հետո, պատրաստվում էին նրա մկրտության տոնակատարությանը կատարելու, իսկ զանազան զավառներում եւ հատկապես վերջին տասնամյակներում երեխային կնքում են առաջին կամ երկրորդ տարեդարձին եւ այլն:

Ծիսակատարությունից մեկ օր առաջ մկրտվող երեխայի ծնողները «Քավորասեղան» էին տանում քավորի տուն: Քավորասեղանը սովորաբար պատկանում է մեկ զույր շաքար, քաղցրեղեն, շամիչ, փշատ, ընկույզ եւ այլն:

Մյուս օրը սկսում էր մկրտության արարողությունը, նախ եկեղեցում ապա տանը, ուր տեղի էր ունենում հացկերույթը¹:

¹ Նույն տեղում, նաև Մինաս Հովսեփյան, նշվ. աշխ. էջ 14-15:

Edic Baghdasarian(Ph.D.)

The Armenian Family

Throughout the history

(In Armenian)



ISBN: ISBN: 978-1-927860-44-1
Armenian Research Center (ARC)
Louys Publication
Toronto, Canada
2016